

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ 95-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ



Անցած են 95 տարիներ եղբրական այն օրերէն, երբ Հնչակեան Քսան առաջնորդներու մարմինները նօնուեցան իրենց վիզերը օղակող մահաբեր պարաններու տակ, Պոլսոյ Սուլթան Պայագիտ հրապարակին վրայ, Յունիս 14, 1915-ին: Անոնք բարձրացան կախաղան՝ մահուան դատապարտուելով իրրեւ անջատողականներ:

Անոնք նահատակուեցան յանուն մեր ազգի եւ հայրենիքի ազատագրական պայքարի արիւնոտ նահապարհին: Անոնք կախաղան բարձրացան յանուն ընկերային արդար կեանքի հաստատման, ժողովուրդներու միջեւ բարեկամութեան եւ պետութիւններու խաղաղ գոյակցութեան ստեղծումին:

Այսօր, կ'ոգեկոչենք Հնչակեան 20 ուսուցիչներուն նահատակութեան 95-րդ տարեդարձը, որ անկիւնադարձային առիթ կը հանդիսանայ, անոնց օրինակով ուժգին փարելու ուժեղ կամքի, հրաշագործ հաւատքի, ժողովուրդի եւ հայրենիքին պահպանութեան սրբազան առաքելութեան: Անոնց կամքը, հաւատքը եւ հայրենիքի սէրը գիրենք գինձ էին աննահանջ կորովով, խորը լուստեսութեամբ եւ մարգարէական տեսլականով, որոնք պատուար հանդիսացան հայ ազգի գոյութեան պահպանման: Անգամ, իրենց վիզերուն անցում մահուան օղակներուն մէջ, անոնք առանց ընկրկումի, դոյզն յուսահատութեան, ընդհակառակը՝ խանդավառ եւ հաւատաւոր՝ պատգամեցին իրենց հետեւորդներուն, ըլլալ լուստես եւ հաւատաւոր: Մեր պատմութիւնը վկայ՝ մեծ է եղած թիւը մեր ազգի պարճանք հերոսական մարտնչուններու, յաղթանակներու եւ գանձում իրենց կեանքի գնով կորոզած նուիրեալ դիւցազուններուն: Անոնցմով կանք, կը գոյատեւենք, կը ստեղծագործենք եւ մեր մասնագիտական, մշակութային, գեղարուեստական, բարձրորակ ներդրումը կը մուծենք աշխարհի քաղաքակրթութեան մէջ: Տէր կը կանգնենք մեր ժողովուրդին, բազում գոհողութիւններով կերտուած մեր անօգնական հայրենիքին: Կը մշակենք ու հարստացնենք մեր մշակոյթը: Կը ջամբենք յոյս, լոյս, հաւատք եւ կորով՝ մեր նոր սերունդներուն: Միշտ ապաւինած ենք մեզ վերանորոգող, զօրացնող եւ լիցաւորող հաւատամքներուն՝ անտեսելով ամէն ցաւ, զրկանք, կորուստ եւ վիատութիւն:

Անոնք, իրրեւ վկաները Օսմանեան համաբուրանական աւազակաբարոյ աւազանի՝ Երիտ. թուրքերու՝ Սելանիկի 1911 թ. կայացուցած Իթթիհատական համագումարին ընդատակեայ նիւթած Ցեղասպանութեան ծրագրին՝ 20-ները պիտի պատգամէին.

«Մեզ քանակներ կը կախէք, բայց քան հազարներ պիտի հետեւին մեզի», պիտի ըսէր Տօֆ. Պէննէ:

20-ներու օրինակով, քան հազարները չէի՞նք անոնք, որոնք կերտեցին Սարտարապատի Յաղթանակը:

Երուանդ Թօփուզեան պիտի պատգամէր զինք հաղորդող քանակին. «Տէր Հայր, տուր այս չոր թաշկինակն իմ մօրս, ըսէ՛ անոր, որ անիկա երբէք թրջուած չէ արցունքով»:

Այո, այդ գոտեպնդող, անվեհերտութիւն եւ խիզախութիւն աւիշող կեցումներ չէ՞ր, որ պիտի գար ներշնչելու գալիք քան հազարներուն, որոնք Սարտարապատի յաղթանակով հիմը դրին Հայաստան աշխարհի Առաջին Հանրապետութեան...

«Իմ հաստատ կարծիքով, մարդուն միակ եւ լուսազոյն ուղին պայքարի ուղին է: Պայքարի յաղթանակի համար: Պայքարի տառապող աշխատաւորութեան յաղթանակի համար: Գործելու յանուն մարդկային երջանկութեան: Մէկ խօսքով՝ պայքարի, որ մարդը ապրի ամենագարգացած միջոցներով: Այս է կեանքի վերջնական նպատակը», պիտի յորդորէր Վանիկ, որ գիտակցաբար մոռացութեան տուած իր վիզը

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՕՐԵՆՔԸ

Երեքշաբթի, Յունիս 15-ին Եւրոպային Ապահովութեան եւ Համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) մամուլի ազատութեան հարցերով ներկայացուցիչ Տունիա Միատովիչ յայտարարած է որ, Հայաստանի «Հեռուստատեսութեան եւ ռատիոյի մասին» օրէնքի ներդրումը հեռարձակման ոլորտին ներս բազմակարծութիւն ապահովելու համար անհրաժեշտ պայմաններ չեն ստեղծեր: Նոյն օրը երեկոյեան, Մարդկային Իրաւանց Հսկիչ (Human Rights Watch) հեղինակաւոր միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեանին կոչ ըրած է չստորագրել Ազգային ժողովին կողմէ օրէնքին մէջ կատարուած փոփոխութիւնները, քանի որ անոնք «բացասական ազդեցութիւն կ'ունենան Հայաստանի մէջ բազմակարծութեան եւ տեղեկատուութեան ազատութեան վրայ»:

Յունիսի 10-ին Հայաստանի

Ազգային ժողովը ընդունեց «Հեռուստատեսութեան եւ ռատիոյի մասին» օրէնքին մէջ կառավարութեան առաջարկած փոփոխութիւնները, որոնց նպատակն է կարգաւորել Հայաստանի մէջ հեռատեսիլի հեռարձակման թուայնացումը: Խօսքի ազատութեան ջատագով կազմակերպութիւնները ու ընդդիմադիրները, սակայն, կը պնդեն, որ իշխանութիւնները կը ջանան երկարաձգել հեռատեսիլի ալիքներու նկատմամբ իրենց լիակատար վերահսկողութիւնը:

Իր յայտարարութեան մէջ Միատովիչ ըսած է որ, քաղաքացիական հասարակութեան եւ խօսքի ազատութեան պաշտպանութեամբ զբաղուող Հայաստանեան կազմակերպութիւնները օրէնսդրական փոփոխութիւններու վերաբերեալ Հայաստանի իշխանութիւններուն մտահոգութիւններ չպատճառ են, իսկ իր ղեկավարած ԵԱՀԿ-ի մամուլ

Շաբ.ը էջ 18

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱՆԱՂԱՆՆԵՐՈՒ 95-ԱՄԵԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ



Հնչակեան երիտասարդները կը յարգեն Քսաններուն յիշատակը՝ Ծիծեռնակաբերդի եղեռնի Յուշարձանի անմահ կրակի մօտ

1915 թուականի Յունիս 15-ին Պոլսոյ մէջ թրքական կառավարութեան կողմէ կախաղան բարձրացած Հնչակեան քան դեկավարներու նահատակութեան 95-ամեակին առթիւ, ՄԴՀԿ «Սարգիս Տիւրունի ուսանողական-երիտասարդական միութիւնը Յունիս 14-ի երեկոյեան Ծիծեռնակաբերդի եղեռնի Յուշարձանի անմահ կրակի մօտ կազմակերպած էր մոմավառութիւն՝ յաւերժացնելու հերոսներու յիշատակը:

Մոմավառութիւնը սկսաւ ՄԴՀԿ մարտական քայլերով՝ «Տուր Ձեռք ընկեր» երգով, որմէ ետք երիտասարդներու առջեւ խօսք առաւ Ընկ. Մանուէլ Աղամեան:

Ընկ. Աղամեան դրուագներ պատմեց պատմական համարուող

ՄԴՀԿ 7-րդ Քեոստենձէի համագումարին, յիշեցնելով, որ Քսան Հերոսներն էին, որ դարձան Ցեղասպանութեանը առաջին զոյժերը:

Ընկ. Աղամեանի ելոյթէն յետոյ կատարուեցան յեղափոխական երգեր:

Յաջորդ օրը՝ Յունիս 15-ին Երեւանի «Կոնգրէս» հիւրանոցէն ներս, «Սարգիս Տիւրունի» ուսանողական-երիտասարդական միութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ կլոր սեղան-քննարկում, որուն կը մասնակցէին Հնչակեան ուսանողական միութեան անդամներ, ՄԴՀԿ պատասխանատուներ, այլ քաղաքական կուսակցութիւն

ՎԱՅԱՍՏԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄՈՎՍԵՍԵԱՆ.

«ԱՄԲՈՂՋ ԳԵՌՈՒՄՏԱՌԱԴԻՈՅԻ ԴԱՇՏԸ ՄՈՆՈՊՈԼԻԶՏԻԱՅԻ ԵՆՈՒՄՈՒԹԻՒՆ ԵՎ ԿՐԱՅ ԵՎ»

«Ա.1+» հեռուստաընկերության ղեկավար Մեսրոպ Մովսեսեանի համոզմամբ, Ազգային ժողովի վաճառքից հետո «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրէնքում փոփոխութիւններն արուեւ են «այլ նպատակներով»:



«Ա.1+» հեռուստաընկերութեան ղեկավար Մեսրոպ Մովսեսեան

«Ամբողջ հեռուստառադիոյի դաշտը մոնոպոլիզացիայի ճանապարհի վրայ է այս նոր գրուած օրէնքով: Այն, ինչ այսօր մենք ունենք, դա արդէն լճացած ու մահացած դաշտ է: Այդ դաշտի մէջ աղմուկի տակ ուզում է ծնուել մի նոր մագնատ, որը պէտք է տիրի եւ իշխի այդ դաշտը: Դա իմ հիմնական մտահոգութիւնն է, եւ կարծում եմ, որ հասնելու են դրան, որովհետեւ կայ հրահանգ»:

Մեսրոպ Մովսեսեանը վստահեցնում է, որ «Ա.1+»-ն անպայման մասնակցելու է Յուլիսի 20-ից յայտարարուելիք հեռուստահեռարձակման լիցենզաւորման մրցույթներին:

«Ես համոզուած եմ, որ մեր առաջարկած նախագիծը բաւականին հետաքրքիր է, եւ ինչ-որ շրջանում կ'ստանան իր իրաւունքը», - ասաց նա:

«Հեռուստատեսութեան եւ ռադիոյի մասին» օրէնքում լիցենզաւորուած անձի ընտրութեան վերաբերեալ յօդուածի կէտերից մէկով ամրագրուած է հետեւեալը. լիցենզաւորման մրցույթի ժամանակ այլ հաւասար պայմանների դէպքում նախապատուութիւնը տրուում է «գործող այն հեռուստաընկերութիւններին, որոնք իրենց գործունէութեան ընթացքում օրէնսդրութեան խախտումներ թողնելու են», ու «գործող այն հե-

ռուստաընկերութիւններին, որոնք հեռուստառադիոհաղորդումների արտադրութեան եւ հեռարձակման բնագաւառում ունեն առնուազան երեք տարուայ փորձ»:

«Գործող հեռուստալիք հասկացութիւնը ես չեմ բացառում նաեւ «Ա.1+»-ի համար, որովհետեւ «Ա.1+»-ը մինչեւ այսօր էլ շարունակում է գործել «Համապիլու» ցանցով՝ որպէս արտադրող եւ հեռարձակող հեռուստաընկերութիւն, որը ունի պատմութիւն: Հակառակ դէպքում դա եւս կը հանդիսանայ խտրականութիւն մեր հանդէպ, քանի որ հարկաւոր է նաեւ հաշուի առնել, որ մենք արդէն ինտերնետ հեռարձակման եթերում ենք», - այս կապակցութեամբ ասաց Մովսեսեանը:

Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանը օրէնքը «անորակ» գնահատեց: Ըստ նրա, փաստաթուղթը չի լուծում բազմակարծութեան եւ խօսքի ազատութեան խնդիրը: Դրական որեւէ բան Նաւասարդեանն օրէնքում չի տեսնում:

ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԱԿՏԻԻՍՏՆԵՐԸ «ՅՐԱԿԻՐՈՒԵԼ» ԵՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

Յունիս 14-ին Ոստիկանութեան Երեւանի Կենտրոն վարչական շրջանի բաժին են հրաւիրուել Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) երեք ակտիւիստներ՝ Մայիսի 31-ին Ազատութիւն հրապարակում տեղի ունեցածի կապակցութեամբ:

Ոստիկանութեան հասարակայնութեան հետ կապերի վարչութիւնից «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրին, որ ՀԱԿ-ի արտաքին քաղաքին կապերի պատասխանատու Վլադիմիր Կարապետեանը, ՀԱԿ-ի երիտասարդական թելի ակտիւիստներ Վահագն Գէորգեանը եւ Սերգէյ Գասպարեանը հրաւիրուել են ոստիկանութիւն, քանի որ նրանց վերաբերեալ նիւթեր են նախապատրաստուած:

Հրաւիրուած ընդդիմադիրները հրաժարուել են բացատրութիւն տալ: Վլադիմիր Կարապետեանին, օրինակ, առաջարկուել է բացատրութիւն տալ Մայիսի 31-ին իրեն վերագրուող ապօրինի կոչեր անելու, հանրահաւաքի կամ ապօրինի զանգուածային միջոցառում անցկացնելու վերաբերեալ յայտարարութիւնների կապակցութեամբ:

«Զանգուածային միջոցառման մասին խօսք լինել չի կարող», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Կարապետեանը՝ շարունակելով. - «Որեւէ կոչ չէի անում»:

Նա յայտարարեց, որ որեւէ բացատրութիւն չի տալ, քանի դեռ Մայիսի 29-ին եւ յաջորդած օրերին Ազատութեան հրապարակում ոստիկանութեան իրականացրած գործողութիւններին չի տալ:

նացրած գործողութիւններին չի տրուել իրաւական գնահատական: Այդ դէպքերի կապակցութեան նրա հաղորդումները Գլխաւոր դատախազութիւն, անպատասխան են մնացել:

ՀԱԿ-ի երիտասարդ ակտիւիստներ Վահագն Գէորգեանը եւ Սերգէյ Գասպարեանը նոյնպէս հրաժարուել են բացատրութիւն տալ: Նրանց մեղադրում են, թէ հայհոյել են ոստիկաններին, մինչդեռ երիտասարդները պնդում են, որ չեն հայհոյել:

18-ամեան Վահագն Գէորգեանը, յիշեցնենք, անցած տարի քրէական պատասխանատուութեան (մէկ տարուայ ազատազրկման) էր ենթարկուել Հիւսիսային պողոտայում իրաւապահների հետ բախման արդիւնքում, սակայն աւելի ուշ նրա նկատմամբ համաներում էր կիրառուել:

Մինչդեռ, Քաղբանտարկեալների եւ քաղհալածեալների պաշտպանութեան կոմիտէն որոշել է Յունիսի 18-ին անկացնել ծրագրուած բողոքի ցույցը, թէեւ քաղաքապետարանը չի արտօնել միջոցառումը:

«Ակցիա է լինելու՝ քաղբանտարկեալների պաշտպանութեան, կարծատեւ նստացոյց, որը օրէնքով թոյլատրելի է», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց իրաւապաշտպան Վարդան Յարութիւնեանը՝ յաւելելով. - «Մեր նպատակը չէ բոլորովին բախման գնալը: Մեր նպատակը մեր սահմանադրական իրաւունքը իրացնելն է եւ քաղբանտարկեալների իրաւունքը պաշտպանելը»:

ԱԲԱՐՏՈՒԵՑ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՅԹԸ



Արամ Խաչատրեանի անուան միջազգային մրցոյթի յաղթողները

Երեւանում աւարտուեց Արամ Խաչատրեանի անուան միջազգային մրցոյթը, որին այս տարի մասնակցում էին 21 երկրներից ժամանած աւելի քան յիսուն երիտասարդ ջութակահարներ եւ թաւջութակահարներ: Յաղթողներն ու լաւագոյն մասնակիցները գալա համերգով հանդէս եկան «Արամ Խաչատրեան» համերգասրահում:

Ջութակահարների մրցոյթի ժւրիի նախագահ, Կոմիտասի անուան լարային քառեակի գեղարուեստական ղեկավար եւ առաջին ջութակ էդուկատոր Թադէւոսեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց յաղթողների անունները:

Առաջին մրցանակը կրսել են

լեւ ջութակահար Եւրոպա Նարդգիցկին եւ Մոսկուայի կոնսերվատորիայի սան Լիա Եակուպովան: Երկրորդ մրցանակ այս տարի չի յանձնուել: Երրորդ մրցանակը նոյնպէս կրսուել է երկու երաժիշտների՝ աւստրալացի Ֆիլիպ Բրետտիի եւ Երեւանի կոնսերվատորիայի շրջանաւարտ Տիգրան Յարութիւնեանի միջեւ:

Թաւջութակահարների մրցոյթում յաղթող են ճանաչուել Եւգենի Ռուստամեանը (Ռուսաստան) եւ Լուկա Մազարեկոն (Իտալիա): Երկրորդ մրցանակին են արժանացել Յասմին վարդանեանը (Հայաստան) եւ Սամուէլ Լուցկերը (Գերմանիա): Երրորդ մրցանակը, ժւրիի որոշմամբ, չի յանձնուել:

ԳՐԾ-ՈՒՄ ՊԱՌԱԿՏՈՒՄ Ե. ՔՈՔՈՔԵԼԵԱՆՆ ՈՒ ԶՈՒՐԱԲԵԱՆԸ ԱՆՎԱՍՏԵԼԻ ԵՆ

«ԱՅՍՕՐ»: Յունիս 12-ին տեղի ունեցած ՀՀՇ վարչութեան նիստի ժամանակ հրաժարական է ներկայացրել կուսակցութեան վարչութեան փոխնախագահ Խաչատուր Քոքոքեւեանը: Ինչպէս տեղեկացանք կուսակցութիւնից, հրաժարականի դիմումն ընդունուել է ի գիտութիւն: Անձամբ Խաչատուր Քոքոքեւեանը հրաժարուում է մեկնաբանել տեղեկութիւնը, չի պատասխանում հեռախօսազանգերին:

ուած է ՀԱԿ-ի կազմում ՀՀՇ-ի հետագայ գործունէութեան հետ: Ըստ աղբիւրների, Խ. Քոքոքեւեանը վերջին շրջանում փորձել է ՀՀՇ վարչութեանը համոզել, թէ ՀՀՇ-ն պէտք է դուրս գա ՀԱԿ-ից եւ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին մասնակցի միայնակ:

Ի դէպ, նման քայլ ասուլիսներից մէկի ժամանակ չբացատրեց նաեւ ՀՀՇ վարչութեան նախագահ Արարատ Զուրաբեանը: Նա եւս չի պատասխանում հեռախօսազանգերին եւ հրաժարուում է մեկնաբանել իր տեղակալի հրաժարականի փաստը: Ըստ մեր տեղեկութիւնների, հնարաւոր է, որ վարչութեան սպասուելիք նիստին նա եւս ներկայացնի հրաժարականի մասին իր դիմումը:

ՀՀՇ վարչութիւնում հնարաւոր վերաբաշխման մասին տեղեկութիւնները հրաժարուում են մեկնաբանել ոչ միայն Հայ Ազգային կոնգրէսը կազմող կուսակցութիւններում, այլեւ՝ այլ քաղաքական ուժերի ներկայացուցիչներ:

Այնուամենայնիւ, յաջողուել է պարզել, որ հրաժարականը կապ-

ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԴՊՐՈՑՆԵՐ ԲԱՅԵԼՈՒ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԻՒՆԻՑ ՌՈՒՄԱԿԱՆ ՅՈՏ Ե ԳԱԼԻՍ

Հայաստանում օտարալեզու դպրոցներ բացելու կառավարութեան նախաձեռնութիւնից ռուսական հոտ է գալիս: NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նման տեսակէտ յայտնեց Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի ղեկավար Ռիչարդ Կիրակոսեանը:

«Ես դէմ եմ Հայաստանում օտարալեզու դպրոցներ բացելուն: Իհարկէ, ես շատ կը ցանկանայի, որ Հայաստանում երիտասարդները օտար լեզուներ սովորեն, այդ թւում՝ անգլերէն, սակայն դրա լուծումը օտարալեզու դպրոցները չեն», - նշեց փորձագէտը:

Հարցին, թէ իր կարծիքով, որտեղից է գալիս այդ նախաձեռնութիւնը, Ռիչարդ Կիրակոսեանը պատասխանեց. «Անկեղծ ասած չգիտեմ, բայց մի կասկած ունեմ, որ փորձ է արւում հին՝ խորհրդային ժամանակների համակարգը վերականգնել, երբ պարտադրուում էր ռուսերէնը»:

ԼՈՒՐԵՐ

ՆԱԼԲԱՆԴԵԱՆ. «ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԸ ՀԱԿԱՍՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆԸ»

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանը յայտարարեց, որ Ադրբեջանի խորհրդարանում վերջերս հաստատուած ռազմական դոկտրինը հակասում է երկրի Սահմանադրութեանը:

Ըստ դոկտրինի, մասնաւորապէս, Ադրբեջանը իրաւունք ունի օգտագործել բոլոր հնարաւոր միջոցները, ներառեալ ռազմական ուժը՝ «զաւթուած տարածքները ազատելու եւ տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու համար»:

«Այդ փոփոխութիւնը հենց հակասում է Ադրբեջանի Սահմանադրութեանը, որտեղ կայ յատուկ յօդուած, որ բացառում է պատերազմի կամ ռազմական գործողութիւնների միջոցով հարցերի լուծումը», - Ազգային ժողովում ի պատասխան «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանի հարցին, ասաց արտգործնախարարը:

Հանրապետական խմբակցութեան ներկայացուցիչ Յովհաննէս Սահակեանի հարցին, որ վերաբերում էր Մադրիդեան սկզբունքներին, նախարարը արձագանքեց. - «Ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման առանցքային հարցը, ինչպէս եւ, բնականաբար, բանակցութիւնների, դա Ղարաբաղի կարգավիճակի լուծման հարցն է, ինչն ապացուցում են ԼՄԲՎԻԼ յայտնի միջապէս յետոյ հրապարակուած Մադրիդեան առաջարկների գլխաւոր սկզբունքները»:

Արտգործնախարարի խօսքով, Ադրբեջանը դէմ է գլխաւոր սկզբունքներին. - «Այն պնդումները Ադրբեջանի կողմից, որ իրենք կարող են Ղարաբաղին տալ բարձր մակարդակի ինքնավարութիւն»



ՀՀ արտգործ նախարար Էդուարդ Նալբանդյան

Ադրբեջանի կազմում, փորձեր են կանխորոշել այդ կամարտայայտութեան արդիւնքները եւ իրականում դէմ են ինքնորոշման սկզբունքի կիրառմանը: Ադրբեջանը մերժել է առաջարկը՝ ստորագրել համաձայնագիր ուժի չկիրառման սկզբունքի կիրառման իմաստով, Ադրբեջանը մերժել է մերժում է հրադարարի ամրապնդման առաջարկները: Իսկ իր ռազմատենչ եւ պատերազմի սպառնալիքներով յայտարարութիւններով, փաստօրէն, փորձում է տապալել բանակցութիւնները»:

Ինչ վերաբերում է տարածքային ամբողջականութեան սկզբունքին, ապա արտաքին գործերի նախարարը յայտարարեց. - «Մէկ սկզբունք կայ, որին իրենք փորձում են կառչել՝ տարածքային ամբողջականութեան սկզբունքը, այն էլ՝ իրենց մեկնաբանութեամբ: Անգամ ասում են, որ Ստեփանակերտում Ադրբեջանի դրօշ են բարձրացնելու: Չնայած բոլորին ակնյայտ է, որ Ղարաբաղի ժողովուրդը այլեւս երբեւէ չի հանդուրժի ադրբեջանական դրօշ»:

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԱՍ Է ՍԵՐՏԱՑՆԵԼ ԿՊԵՐՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Եւրոպական Միութեան արտաքին գործոց նախարարները Յունիսի 14-ին Լիւքսեմպուրգի մէջ կայացած իրենց հանդիպման ժամանակ յատուկ փաստաթուղթ ընդունած են Հարաւային Կովկասի 3 երկիրներուն՝ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Վրաստանի հետ յարաբերութիւններու վերաբերեալ, ուր արձանագրած են տարածաշրջանի հետ կապերը ամրապնդելու եւ սերտացնելու՝ Պրիւքսէլի պատրաստակամութիւնը:

«Եւրոպական Միութիւնը կը սպասէ Հարաւային Կովկասի երեք երկիրներուն հետ ընկերակցային համաձայնագրեր կնքելու շուրջ բանակցութիւններուն, որոնք պէտք է մեկնարկեն մօտ մէկ ամիս ետք՝ այս տարուայ Յուլիսին», - յայտարարած են կառուցի անդամ 27 երկիրներու արտաքին գործոց նախարարները, շեշտելով որ, այդ համաձայնագրերը «հնարաւորութիւն կու տան ամրապնդելու քաղաքական կապերը, ինչպէս նաեւ՝ ապահովելու տարածաշրջանի երկիրներու մուտքը եւրոպական շուկաներ՝ ստեղծելով խոր եւ համապարփակ ազատ առեւտուրի գոտիներ»:

Միաժամանակ, Եւրոպական Միութեան խորհուրդը հերթական անգամ ընդգծած է, որ յարաբերութիւններու այդ առաւել սերտ աստիճանին հասնելու

համար հարակովկասեան երկիրները պէտք է բարեփոխումներ իրականացնեն «ժողովրդավարութեան, օրէնքի գերակայութեան, մարդու իրաւունքներու նկատմամբ յարգանքի ու լաւ կառավարման ոլորտներէն ներս»:

Ընդունուած Փաստաթուղթին մէջ նախարարները յայտնած են, որ չեն հրաժարած Հարաւային Կովկասի քաղաքացիներուն համար Եւրոպա մուտք գործելու պայմանները դիւրացնելու խոստումէն: «Եւրոպական Միութիւնը կը մնայ պատրաստակամ անցազրային ռեժիմի մեղմացման շուրջ Հարաւային Կովկասի եւ արեւելեան միւս գործընկեր երկիրներու հետ համաձայնագրեր կնքելու հարցով», - ըստած է փաստաթղթին մէջ: «Երբ այս համաձայնագրերը ստորագրուին եւ յաջողութեամբ կեանքի կոչուին, Եւրամիութիւնը, երկարաժամկէտ ծրագրի մը շրջագիծէն ներս, պատրաստ է նաեւ աստիճանաբար քայլեր ձեռնարկելու, վիզաները վերացնելու եւ անվտանգ ու վերահսկելի տեղաշարժ ապահովելու ուղղութեամբ»:

Փաստաթուղթին մէջ Եւրոպական Միութեան արտաքին գործոց նախարարները նաեւ անդրադարձած են տարածաշրջանէն ներս առկայ՝ սառեցուած հակամարտութիւններուն, յայտնելով, որ անոնք

ՀՐԱՆԴ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻ ՄԱՍՆ Է

Յունիս 15-ին Ստամբուլում մեկնարկած թուրք ծովակալների նկատմամբ դատավարութեանը Հրանդ Դինքի ընտանիքի շահերը ներկայացնող փաստաբանները ցանկանում են մասնակցել՝ հայցուորի կարգավիճակով, ինչը նրանց հնարաւորութիւն կը տայ ծանօթանալ գործին կցուած փաստաթղթերին ու տեղ գտած բոլոր ապացոյցներին: Բանն այն է, որ ըստ այդ գործի նիւթերի, պետական յեղաշրջում են թաղարող «Քաֆես» («Վանդակ») կոչուող գործողութիւնների ծրագրի համաձայն, Թուրքիայում բնակուող կրօնական փոքրամասնութիւնների ներկայացուցիչները պէտք է յարձակումների թիրախ դառնային, ինչն էլ, իր հերթին, երկրում քառասյին իրավիճակի կը հանգեցնէր՝ բաւարար պայմաններ ստեղծելով քաղաքական կեանքին բանակի միջամտութեան համար:

65 էջանոց մեղադրական եզրակացութեան մէջ նշուած է, որ յարձակումների հիմնական թիրախների թւում են եղել նաեւ «Ակօս»-ի խմբագրակազմն ու թերթի մշտական ընթերցողները: Քննիչները մեղադրեալի աթոռին յայտնուած սպաներից մէկի համակարգչում յայտնաբերել են նաեւ «Ակօս»-ի բաժանորդների ցանկը:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԶԼՍ-ՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒՇԴ ՎԱՐՈՒԵՑ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԵՏ

Ֆրանսիական լրատուամիջոցները հիանալի գիտեն Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի պատմական իրողութիւնները, բայց այսօր նրանք մտահոգ են միայն մէկ հարցով՝ հայ-թուրքական յարաբերութիւնների վերականգնման գործընթացի դանդաղեցմամբ: Այդ մասին այսօր Երեւանում ասուլիսի ժամանակ յայտնեց Փարիզի «Հուժանիտար գիտութիւնների տուն» հիմնադրամի ղեկավար Միշէլ Վիելիորկան: Ըստ բանախօսի, ֆրանսիական լրատուական դաշտում տիրում է այն կարծիքը, որ գործընթացը տապալուեց Ղարաբաղեան հիմնախնդրին Երեւանի հետ յարաբերութիւնների բարելաւումը կապելու՝ Անկարայի փորձի պատճառով:

«Ֆրանսիական լրատուամիջոցները հիանալի հասկանում են ընդունում են, որ հայկական կողմն իրեն շատ ճիշդ պահեց հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման շուրջ ստեղծուած այս իրավիճակում: Հայաստանը չծայրայեղացրեց ստեղծուած իրավի-

նութադրաբար, «Ակօս»-ի մշտական ընթերցողներին պէտք է սպառնալից բնույթի նամակներ ուղարկուէին: «Ակօս»-ի փոխխմբագիր Սարգիս Սերրբեանը «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում նշել է, որ հենց այս բացայայտումն էր, որ ստիպել է «Ակօսի» փաստաբան Ֆեթիհ Չեթինին ակտիւ գործողութիւնների դիմել: «Չեթինն աշխատում է, որպէսզի այդ ցանկում տեղ գտած անձանցից գոնէ մի քանի տասնեակը դիմեն դատարան՝ պահանջելով իրենց որպէս հայցուոր ներգրաւուել դատական գործընթացում», - ասել է Սերրբեանը:

Ի դէպ, հետաքննութիւնը պարզել է, որ Ռազմածովային ուժերի շտաբում մշակուած «Քաֆես» ծրագիրը բաղկացած է եղել մի քանի փուլերից, որոնցից մէկն էլ հենց Դինքի սպանութիւնն էր: «Եթէ գոյութիւն է ունեցել այսպէս կոչուած երրորդ փուլ, ուրեմն եղել են նաեւ դրան նախորդող երկու փուլեր եւս», - լրագրողների հետ զրոյցում նշել է Չեթինը՝ չաւելելով. «Կարծում եմ, որ Դինքի սպանութեանը նախորդող փուլերի հետաքննութիւնը այս յանցագործութեան նոր մանրամասներ կարող է ի յայտ բերել»:

ճակը՝ ցուցադրելով ամբողջ աշխարհին, որ ի տարբերութիւն Թուրքիայի, ինքը պատրաստ է շարունակելու գործընթացը եւ որեւէ արգելքներ իր կողմից չի տեսնում», - ասաց բանախօսը:

Հիմնադրամի ղեկավարը նաեւ նկատեց, որ Ֆրանսիայում գոյութիւն ունի բաւական ուժեղ, կրթութեամբ ու համախմբուած հայկական համայնք, որը, ի տարբերութիւն Թուրքական եւ ադրբեջանական համայնքների, միշտ կանգնած է ի պաշտպանութիւն իր երկրի շահերի:

«Հայկական համայնքը հանդէս է գալիս որպէս երաշխաւոր, որ ֆրանսիական լրատուամիջոցները ճիշդ արտացոլեն իրավիճակը՝ ի տարբերութիւն Թուրքական համայնքի, որը նոյնիսկ կազմակերպուած կամ միահամուռ չէ», - նշեց Միշէլ Վիելիորկան՝ չաւելելով, որ ֆրանսիական լրատուամիջոցների կարծիքները մոնոպոլիզացուած չեն պետութեան կողմից եւ յաճախ իրենց դիրքորոշումը չի համընկնում պաշտօնականի հետ:

րածաշրջանային համագործակցութիւնն ու եւրոպական մայրցամաքի կայունութիւնը:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Avenue
 Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած են յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵՔԻ ՏԱՔ ԱԲԱԶԱՆԸ ԵՒ ԽԵՂՃ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐՈՒ ԳԼԽՈՒՆ ԻՋՆՈՂ ԳԱԲԱԶԱՆԸ

ՀԱՆՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Կասկածելու կարիք կա՞ջ...: Միջին Արեւելքը դարձեալ թատերաբեմ է նոր իրադարձութիւններու, ուր տեսակաւոր դիմակներու առատութիւնը պատճառ կը հանդիմանայ որ չկարողանաս ճիշդ գնահատական տալ կատարածին, քիչ մը շշմած, քիչ մը զարմացած՝ դէպքերու արագ ընթացող զարգացումներէն եւ մանաւանդ նոր-նոր բեմադրիչներու եւ դերասաններու յայտնաբերումէն...:

Գիտէինք, թէ քաղաքականութեան մէջ «յաւիտենական բարեկամ, յաւիտենական թշնամի» յորջորջուած յանկերգը գոյութիւն չունի, այլ կա՞ջ՝ ՇԱՀ... միա՛ջն, որուն համեմատ շահախնդիր կողմեր կը լարեն իրենց կողմնացոյցները եւ կը դիրքորոշուին ըստ այնմ, ուժ տուած լեզուի ճկունութեան ու դիւանագիտական բառարանին մէջ գոյութիւն ունեցող առաձգական բառերուն՝ միշտ գունաւոր ու քողարկուած հովանոցներու տակ, մերթ ալ սպառնազին ոճով...:

Վերջերս, Թուրքիոյ Իսթանպուլ քաղաքէն մեկնարկ վերցուցած «Ազատութիւն» նաւը, կարծեցիկ, որ պիտի ճեղքէր Իսրայէլի կողմէ գործադրուած շրջափակումը եւ պաղեստինեան «Կագա» մասնիկին ու բնակիչներուն հասցնէր ուստեստեղէն, դեղօրայք, հագուստեղէն եւ այլ կագածներ, թեթեւեղ ձեւով անոնց ցաւը...: Անշուշտ, ներքնապէս, որպէս իրաւագրկուած ժողովուրդ, ուրախացանք ու գոհացանք մասամբ, միանգամընդմիջտ բաժնելով տկարին օգտակար ըլլալու գաղափարը:

Մենք, հայերս, այս ուղեւորութեան հանդէպ հաւանաբար ամենաշատ հետաքրքրուողներն էինք, որովհետեւ մենք գիտէնք թէ ինչ կը նշանակէ շրջափակում եւ ինչ կը նշանակէ գրաւում... ու լա՛ւ կը հասկնանք ինչո՞ւ պաղեստինցի ժողովուրդին վեց տասնամեակներու գրկանքը, անոնց ապրած տաժանելի կեանքը եւ իրենց նկատմամբ գլացուած մարդկային ամենադոյզն իրաւութիւնները... որոնց նմանները առատօրէն ճաշակած էր հայրը՝ դարեր շարունակ... իր արեւմուտքի հարեւանէն:

Նոյն այդ հարեւանը, որուն վրայ կը խորհինք որ վերջերս իջած է Նախախնամութեան շունչը, այսօր Հայոց Յեղասպանութեան 95 տարիներ ետք, կարգ մը ցամաքամասերու վրայ կատարուող

ամենափոքր սպանդն անգամ, ըլլալ Ասիոյ մէջ, ըլլալ Աֆրիկէի մէջ, նոյնիսկ ի հեռատան... ան կ'որակէ «ցեղասպանութիւն», «անմարդկութիւն», «անխղճութիւն» եւ մասամբ նորին (անշուշտ միշտ նկատի առած կողմնացոյցին ուղղութիւնը), շահելով մարդկանց անվերապահ գնահատականը եւ, ինչու չէ՞՝ բացարձակ հիացումը եւ սքանչացումը... դառնալով իսկական բեմադրիչ-դերակատար:

Վստահ ենք, որ արաբ ասպնջական ժողովուրդը շատ լաւ կը ճանչնայ իր վաղեմի բարեկամը, երբեմնի օսմանցին, որ չորս հարիւր երկար տարիներ գուրգուրաց զինք՝ «հարազատ մօր մը» նման... եւ հիմա ան իննսուն տարիներու բացակայութենէ ետք դարձեալ կը գրկուի անոր հետ, բայց այս անգամ «հերոս ու իննամատար հօր» պատմութեանով, քաղաքական նախաձայնի սեղանին համար օգտագործելով մեղր ու կարագ...:

Կագայի շրջափակումը վստահաբար յանցանք է, մե՛ղք, եւ միջազգայնօրէն արգիլուած ու դատապարտուած պարագայ: Բայց, զարմանալին այն է, որ պաղեստինցիի չափ իրենք զիրենք արաբ դաւանող բազմաթիւ արաբական երկիրներ, կ'երեւի յոգնած տասնամեակներու ֆութպոլային քաղաքական մարզաքննչէն, (բացառութիւնները յարգելի) հիմա քաջուած են հրապարակէն եւ սառնասրտութեամբ կը դիտեն անցողորմէրը, նախընտրելով լուծութիւնը, մերթ ընդ մերթ ծափելով, եւ վայելելով բնութեան բարիքները, մոռացութեան տուած Պաղեստին, Արաբական դատ եւ Արաբական արժանապատուութիւնը:

Ըսի, թէ մենք ազգովին մեծապէս կը քաջալերենք մարդասիրական ամէն օժանդակութիւն, մերժելով ամէն տեսակի շրջափակում ու գրկանք: Հիմա որ «Ազատութիւն» նաւը քաղաքականօրէն յորջորջեալ իր առաքելութեան մէջ, եւ վստահ ենք, որ թրքական իշխանութիւններ, մանաւանդ իշխող կուսակցութիւնը այս քայլով բարձրացուց իր նուագագոյնի իջած ժողովրդականութիւնը երկրի տարածքին եւ կրցաւ սիրաշահիլ իրմէ կամաց-կամաց երես դարձնել փափաքող համակիրները, ինչպէս նաեւ արաբ ժողովուրդներուն համակրանքը... դատուելու համար արաբական ու իսլամական աշխարհի ղեկավար, առաջնորդ, պահ մը մոռցնել տալով արաբական

աշխարհի երբեմնի իսկական ղեկավարները:

Բայց այս պարագային, մենք ակամայ որպէս արաբական երկիրներու հպատակներ, քաղաքացիներ եւ բնակիչներ, քիչ մը նուաստացած զգացինք մենք զմեզ, երբ նշմարեցինք հրապարակի վրայ գտնուող շատ մը արաբական ազդեցիկ երկիրներու ղեկավարներուն կրակորական կեցուածքները, որոնք նախընտրեցին լուել... ու դիտելով բաւարարուել:

Անշուշտ, շնորհիւ իր ունեցած դիւանագիտական ճկունութեան, այսօր շօշափելի յաջողութեան հասած թրքական իշխանութիւններ, իրենց արձանագրած վերջին «փեռնալթի»-ն ետք, (ան ալ որո՞ւ... իր վաղեմի գործընկերոջ բերդէն ներս) պիտի մշակեն քաղաքական նոր մարտավարութիւն:

Վստահաբար, այսօր, ձեռք ձգուած ամբողջավարական յաղթանակը նոյն ուժգնութեամբ ու մակարդակով պահելը գլխաւոր հարց է թէ՛ արեւմուտքի դէմ բախտախաղի նստող, թէ՛ Միջին Արեւելքէ ներս «մեծութիւն» դառնալու ձգտող եւ թէ՛ իսլամական աշխարհի մենատէրը դառնալ փափաքող հանրապետական Թուրքիոյ համար:

Մինչեւ հոս, անոնք քալեցին շատ լաւ: Կը մնայ տեսահոլովակին շարունակութիւնը: Անոնք պիտի կրնա՞ն իրենց վաղեմի հոգեղբայրէն՝ Իսրայէլէն բաժնուիլ...: Բայց չէ՞ որ տակաւին մինչեւ այս պահը անոնք քաղաքական, ռազմական, տնտեսական, ընկերային եւ այլ շատ գաղտնի փոխադարձ դաշինքներ ու համաձայնութիւններ ունին ու շատ մը բնագաւառներու մէջ հարազատ երկուորեակներ են... իրարու պէս մտածող, իրարու նման գործող, իրարու նման միշտ ալ «խիղճ»ով գործող...:

Արդ, այսօրուայ մեր գլխաւոր դերակատարը ինչպէ՞ս յանկարծ պիտի հրաժարի իրեն ընծայուած այդ անսահման բարեկամութենէն, շահէն, առաւելութենէն, որ միջազգային քաղաքական բեմի վրայ անհուն նեցուկ է իրեն, Միջին Արեւելքէ մինչեւ Եւրոպա, Եւրոպայէն մինչեւ Ամերիկա ու այլուր, ուր ան առաւելագոյնս օգտագործեց ու տակաւին կ'օգտագործէ Իսրայէլին ու անոր լուսին բոլոր հնարաւորութիւնները, իր մանաւանդ ամենագերգայուն հարցերուն քողագերծման պարագային:

Հետաքրքրական է իմանալ,

թէ այս կատարուածին ու կատարուողին ինչպէ՞ս պիտի նայի եւ ընդունի արդեօք Միացեալ Նահանգները, որ երկուքին ալ հարազատ կնքահայրն է միաժամանակ երկար տարիներէ ի վեր, եւ անոնց բոլոր քաղաքական հաշիւներուն հեռատես երկրաչափը, որ միշտ ալ հաշիւը կ'ընէ տաք թէ պաղ պատերազմներուն:

Ինչ որ ալ ըլլան պայմանները, դիւանագիտութեան ճարպիկ լեզուն չի կրնար քողարկել իրականութիւնները: Երբ կը խօսիս շրջափակման մասին, դուն պէտք չէ գտնուիս նոյն արարքին մէջ, իսկ երբ կը խօսիս գրաւման մասին, դուն իրաւունք չունիս անմեղ ձեւանալու՝ երբ յափշտակիչ ես, իսկ երբ կը գոռաս մարդկային իրաւունքներու մասին, պէտք է առաջինը դուն յարգես նման իւրաւունքներ: Սա՛ մարդկային նուագագոյն պարկեշտութիւնն է, զոր կը դասաւանդուի ու կը քարոզուի... դարերէ ի վեր:

Երբ կը խօսինք գրաւման մասին, արդեօ՞ք մարդկութիւնը կրնայ մոռնալ երբեմնի Մեծ Հայաստանը, որ այսօր մնացած է ափի մը չափ, որուն հողերը գրաւուած կը մնան դարերէ ի վեր:

Երբ կը խօսինք տառապանքի, ջարդի, կոտորածի ու ցեղասպանութեան մասին, արդեօ՞ք մարդկութիւնը կրնայ մոռնալ Հայոց Յեղասպանութիւնը եւ մէկուկէս միլիոն հայ նահատակները:

Երբ կը խօսինք ընդհանրապէս գրկանքներու եւ իրաւութիւններու մասին, արդեօ՞ք կարելի է անտեսել Կիպրոսի յոյն բնակչութեան պարագան, ինչպէս նաեւ Անատոլիայի քիւրտներուն, այլեւիներուն, հայերուն եւ ասորիներուն պարագաները... կամ՝ Հրանդ Տինքերն ու վերջերս իսկէնտէրունի մէջ սպաննուած պապական նուիրակը...:

Երբ կը մատնանշենք անմեղներ սպաննելու ինդիքը, արդեօ՞ք հեշտութեամբ կը մոռցուին Պէյրութի Նահատակաց հրապարակը, Դամասկոսի Մէրժէի հրապարակը եւ Իսթանպուլի Պայագիտի հրապարակը...:

Գիտենք, որ լեզուն ոսկոր չունի, ան կը դառնայ բոլոր ուղղութիւններով, բայց դիւանագիտութիւնը... ըլլալով հանդերձ գերագոյն խաբկանքի փիլիսոփայութիւն, վստահաբար, ուշ կամ կատարուած:

Մար. Էջ 18



SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585

CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ





ԱՄԵՆ ԻՆՉԻՆ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ. ԹՈՒՐՔԻԱՆ, ԻՍՐԱՅԷԼԸ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՅԸ

ՐԱՖԻԿ Կ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Այսօրուայ թուրքիան մօտ մէկ դար առաջ Օսմանեան կառավարութեան իրագործած՝ հայ ժողովրդի Յեղասպանութեան ու Մեծ հայրենագրկման ժխտման կրողն է:

Իսրայէլը՝ դրանից մէկ սերունդ յետոյ կատարուած Շոահի (Shoah) կրիչ-պետութիւնը, վաղուց ի վեր անխղճօրէն մեղսակից է եղել հայոց կեանքի եւ հայրենիքի կորստի «ռէալպոլիտիկա» հիման վրայ լուսանց քայնացմանը՝ ընդհուպ մինչեւ մարդկութեան հանդէպ անյարմար ու «դուրս գրուելիք» ոճրագործութիւնների ծանօթագրութիւնների աստիճան:

Թուրք յանցագործը եւ հրեայ գոհը՝ պատմականօրէն տարբեր լինելով հանդերձ, արդի ժամանակահատուածում յաղթահարել են իրենց անզուգահափութիւնը, որպէսզի դարբնեն ռազմավարական մի դաշինք, որտեղ իրաւունքին զգեստնում է ուժը, իսկ ազգային շահը՝ որքան էլ նեղ լինի, մնում է uber alles՝ ամեն ինչից վեր: Նրանք երկուսն էլ դարձել են իրար նման:

Պետական վարքագծին բարեբախտաբար հաւասարակշռում են եւ թուրքիայում, եւ հրէական աշխարհում ապրող բարեգութ այն քաղաքացիները, ովքեր, չնայած թուրք ազգի անվեհեր մեծութեան կամ Ողջակիզման եզակիութեան մասին ամբարտաւան շարադրանք-

ներին, ըմբռնել են սեփական պատմութեան հետ առերեսուելու, պատասխանատուութիւն ստանձնելու եւ ցեղասպանութեան համամարդկային բնույթից դասեր քաղելու հրամայականը: Արդարամիտ այս մտածումներն ու հրէաները, սակայն, տակաւին չեն կարողացել գերակայ դառնալ:

Փոխարէնը՝ նէոսոսմանեան տարատեսակ էրողաններն ու դաւուր-թողլուներն են, որոնց երկրորդի մոլեգնումը պայմանաւորում է տարածաշրջանային վերապնդուած հեզեմոնիայի եւ կայսերական ներկայութեան նրանց խեղաթիւրուած մտապատկերը: Միայն թէ այս անգամ Յեղասպանութեան սոյն ուրացողներն իրենց նպատակի խորքերին հասնելու համար չարաշահում են ազատութեան, մարդու իրաւունքների եւ միջազգային օրէնքի հայեցակէտերը:

Իսրայէլի կողմից Գազայի շրջափակումը սխալ է եւ այն հանգուցալուծման կարիք ունի: Պողեստինը՝ Լեռնային Ղարաբաղի նման, վաստակել է ինքնիշխան պետութիւն լինելու իր իրաւունքը:

Բայցեւայնպէս նաւատորմիղի հանդէպ իսրայէլական հակազդեցիկ գործողութիւն խթանելու՝ Անքարայում զգուշօրէն մշակուած սադրանքի հուսիւնն ու հռետորութիւնը մատնում են թուրքիայի ղեկավարների իրական մտադ-

րութիւնները, որոնք են՝ ա) տարածաշրջանային խաղաղասիրութեան հաշուին հետապնդել իրենց իսկ ազդեցութեան եւ վեհացման պատրանքը, բ) քողարկել իրենց կողմից նոյն այն ժողովրդի՝ որպէս շախմատային գիտուորի, բուն շահագործումը, որին նրանք ցանկանում էին օգնութեան հասնել յանուն իսլամական համերաշխութեան, գ) չարամարտուէտօրէն կոծկել իրենց կողմից 1993 թուականից ի վեր Հայաստանի անօրինական շրջափակումը:

Նրանք ներկայացնում են մի պետութիւն, որը հայերի դէմ ցեղասպանութիւն գործադրելով՝ ոչնչացրեց մի ողջ քաղաքակրթութիւն, ինչպէս եւ ասորիները, Պոնտոսի յոյների, ապա եւ քրտերի պարագան էր, եւ մինչ օրս իր մէջ չի գտել այն քաղաքական խիզախութիւնը կամ բարոյական ներուժը, որպէսզի դա ընդունի, ապաշխարի եւ արդար հատուցում տայ դրա դիմաց: Մի պետութիւն, որը հեռու լինելով ինքնամաքրման եւ ճշմարիտ հաշտեցման որոնումից, իր բռնարգէլներն ու պատերազմին յատուկ այլ ոճիրներն է բերել Յեղասպանութիւնից մագապուած հայոց մնացորդ հանրապետութեանը: Մի պետութիւն, որը կազմաւորուել է հայերի՝ իրենց ազգաժառանգ հայրենիքից բռնի բացառման արդիւնքում եւ, ի վերջոյ, մի պետութիւն, որն այսօր օրէնքով արգելում է Յեղասպանութեան որեւէ յիշատակում եւ «խորքային պետութեան» հովանաւորութեամբ մահուան է դատապարտում բոլոր նրանց, ովքեր, ինչպէս Հրանտ

Տինքը, փնտռում են խաղաղութիւն եւ հանգուցալուծում՝ ճշմարտութեան ուղով:

Եւ հիմա բռնապետ դարձած սոյն «հափաւոր իսլամիստները»՝ իսրայէլի հետ դիրքապայքարելով իրենց իսկ ծրագրերից եւ մանր միաւորների վաստակումից ելնելով, հասցրել են յարուցել օրուայ բուն հարցը:

Հրէական շրջանակներում եւ դրանից անդին հաւաքական խիղճը «թարմացում է» եւ երեւում է, որ աստիճանաբար վեր է յառնում յիշողութեան Օրվելեան փոսից: Մարդիկ արդէն սկսում են խոստովանել թուրքիայի՝ ցեղասպան յետագծի վերաբերեալ իրենց յիշողութիւնները: Ինչ վերաբերում է պարագիզմաներին ու դրանց փոփոխութիւններին, ապա սա ողջունելի միտում է. ինչպէս հայկական ասացուածքն է յուշում՝ «Չկայ չարիք առանց բարիքի»:

Սակայն որպէսզի դարակազմիկ այս հիմնախնդիրը հանգուցալուծուի պատմութեան հետ լիովին հաշտ՝ դրա պատճառային հիմքը պէտք է լինի ամուր, իսկ իրականացումը՝ ամբողջական:

Երբեւիցէ չպէտք է թույլ տրուի, որ անցեալ դարի Հայոց ցեղասպանութիւնը եւ դրանից անցուող վերապրող-պետութեան անվտանգութիւնը՝ այստեղ գտնուող իր մայրաքաղաքով մեկտեղ, դառնան քաղաքական ֆուլթայլախաղ երկու նախկին դաշնակիցների միջեւ ընտրովի օգտագործման համար՝ պարզաբանելու իրենց յարաբերութիւն-

Շաբ.ը էջ 19

Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան

AGBU Vatche and Tamar Manoukian High School

Նոր Աշակերտներու Արձանագրութիւն, 9րդ-12րդ Դասարաններ
New Student Enrollment, Grades: 9-12

✓ College Preparatory Academic Program	✓ Comprehensive Armenian Curriculum
✓ Honors or Advance Placement (AP) Level Instruction in all subject areas	✓ Technology and Computer Program
✓ Small Class Sizes and Individual Attention	✓ College Counseling and Admissions Guidance
✓ Visual Performing Arts Program in Dance, Drama, Theater, Music and Choir	✓ Co-curricular and Extra-Curricular Activities including Competitive Sports
	✓ Safe and Secure Closed Campus

Կրթաթոշակներ տրամադրելի են այն աշակերտներուն, որոնք ուսումնական բացառիկ յաջողութիւն ցուցաբերած են, ինչպէս նաեւ գերազանց ընդունակութիւն ունին հետեւեալ մարզերէն ներս. -

Հայագիտութիւն - «Technology» - Երաժշտութիւն - Թատրոն - Պարարուեստ

Չեր Զաւակներուն Համար Կատարեցէք Լաւագոյն Ընտրութիւնը

Ուսում, Կրթութիւն, Յաջողութիւն

Call: (626) 794-0363
We are located at 2495 E. Mountain St, Pasadena, CA 91104

ՅՈՒՆԻՍԻԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԻՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Ս. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ



Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեանի Քահանայական ձեռնադրութեան երեսուցամեակի, եւ եպիսկոպոսական օժման քսանամեակի յոբելինական շքեղ հանդիսութիւն մը տեղի ունեցաւ Ուրբաթ 4 Յունիս 2010, երեկոյեան ժամը 8.00-ին, Առաջնորդարանի Գալաթեան սրահին մէջ: Նոյն առիթներով, Կիրակի 6 Յունիս 2010-ին, մատուցուեցաւ հանդիսաւոր Պատարագ, որուն աւարտէն ետք, կ.վ. ժամը 1.30 տեղի ունեցաւ ճաշկերոյթ-հանդիսութիւն, Առաջնորդարանի Գալաթեան սրահին մէջ: Շուրջ 500 հոգի հաշուող հասարակութեան մէջ կը նշմարուէին Լոս Անճելոսի

մօտ Հայաստանի աւագ հիւպատոս տիար Գրիգոր Յովհաննիսեան, ինչպէս նաեւ տարբեր կուսակցութիւններու, կազմակերպութիւններուն եւ թեմական կառոյցներու ղեկավար ներկայացուցիչներ: Յայտագիրն սկսաւ Յովնան Արք. Տէրտէրեանի գրչէն քաղուած խոսքերու եւ մտածումներու ընթացումներով, զորս կատարեցին Տիգրան Ալթունեան եւ Ժպիտ Զինար: Հանդիսավար Տօքթ. Կիրակոս Մինասեանի բարի գալուստի խօսքէն ետք բանախօսութեամբն հանդէս եկաւ Արք. Ս. Դոկտ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան (իր ելոյթը կարդալ էջ 17): Ան մասնաւորաբար անդրադարձաւ Յովնան Արք. Տէրտէրեանի անհատական, վարչական եւ հոգեւոր արժանիքներուն մասին:

«Մարդը Յովնան Արք. Տէրտէրեանի կողմէն» նիւթով հանդէս եկաւ Տօքթ. Սիմոն Սիմոնեան, արժեւորելով տեսիլք ունեցող հոգեւորականի վարչական կարողութիւնները: Յուցագրուեցաւ յոբելիար սրբազանի կեանքին նուիրուած տեսանկյուն: Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի ուղղուած բարեմաղթանքի խօսքերով ելոյթներ ունեցան գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեան, Արմէն Համբար, Ժողովի Կահանայի, նախկին առաջնորդ Վաչէ Արք. Յովսէփեան, Տօքթ. Յարութ

տազրին իրենց մասնակցութիւնը բերին Վաչէ Մանկրեան (դաշնակ) եւ Ալեքսան Եղնազարեան (մեներգ): Ներկաները յոտնկայս ունկնդրեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի զնահատանքի եւ օրհնութեան գիրը ուղղուած յոբելիար Յովնան Արք. Տէրտէրեանին, զոր կարդաց Արք. Ս. Խաժակ Քհնյ. Շահպազեան: Սոյն տպաւորիչ հանդիսութեան աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ յոբելիար Յովնան Արք. Տէրտէրեան: Ան յատկապէս անդրադարձաւ իր ծառայական տարիներուն եւ իր կեանքին ուղեցոյց



Եղնազեան, Կիրիլիոս Կաթողիկոսութեան միաբաններէն՝ Տաթև Արք. Սարգիսեան եւ Եփրեմ Արք. Թապաքեան: Այս վերջինը աղամանդակու յայտնաբերուած մատանի մը նուիրեց Յովնան Արք. Տէրտէրեանին: Օրուան գեղարուեստական յայ-

դարձած կարգ մը երեկոյթներուն մասին, շեշտելով որ «Քահանայութիւնը՝ կերպարանափոխուած է»: Ապա շնորհակալութիւն յայտնեց սոյն հանդիսութիւնը կազմակերպողներուն, մասնակիցներուն, թե-

Շաք. Էջ 17

ՀԻՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՍՆՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Նախաձեռնութեամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի Մամլոյ Դիւանի՝ Յունիս 6, 2010, երեկոյեան ժամը 6.00-ին, Պըրպէնքի Առաջնորդարանէն ներս, տեղի ունեցաւ Մամլոյ ասուլիս մը, որուն բացումը կատարեց Տիար Ռաֆֆի Գեներալ: Ան ներկաներուն ուղղուած իր բարի գալուստի խօսքէն ետք, միանգամայն պարզեց Ասուլիսի նպատակը, որ էր մօտէն տեղեակ պահել մամուլն ու անոր միջոցաւ հայ համայնքը՝ կառուցման աւարտական գործընթացի մէջ գտնուող Առաջնորդարանի Տաճարի եւ Անոր Օժման առաքելութեամբ, Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.-ի Լոս Անճելոս այցելութեան մասին: Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան գեկուցեց Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.-ի՝ Առաջնորդանիստ Տաճարի Օժման Առաքելութեամբ, ինչպէս նաեւ մեծ թիւով հիւր եպիսկոպոսներու Լոս Անճելոս այցելութեան մասին: Իր աւարտին հասնող Տաճարի Օժման արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, Սեպտեմբեր 11, 2010-ին, նախագահութեամբ Նորին Ս. Օժութիւն Ս. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Օժման Արարողութիւններուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն, նաեւ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու հրաւիրեալ աւելի քան տասներկու Թեմական Արքեպիսկոպոսներ, որոնք պիտի գան մաս կազմելու Հայրապետական շքախումբին: Առաջնորդ Սրբազան հայրը

He questioned whether a bill in Congress would help "reconcile" the differences between Turks and Armenians, as though the whole thing was a marital spat that needed some calming down.

"The Turks and Armenians need to revisit their past. The Jewish community shouldn't be the arbiter of that history. And I don't think the U.S. Congress should be the arbiter, either."

He was lifting lines right out of the Turkish playbook. I almost had to revisit his website to make sure that the ADL was still in the business of fighting not only anti-Semitism but "bigotry and extremism" and "securing justice and fair treatment to all."

I pointed out that the genocide had already been documented as a fact by many prominent historians. And

Congress recognizes all sorts of people's history. Resolutions commemorating the victims of the Holocaust, for instance.

"You're not suggesting that an Armenian Genocide is the same as the Holocaust, are you?"

I tried to draw the parallels that the scholars had drawn, but Foxman saw it as an affront. The oneness of the Holocaust was being debased by Armenians looking for a piggyback ride.

"Are you Armenian?" he finally asked.

"Would it matter if I was?" I replied. "Black reporters cover civil rights. Latino reporters cover immigration. Jewish reporters write about Holocaust deniers. We're journalists."

I wrote the story and filed it. My editor in Washington was pleased. It landed on the weekend budget, a strong candidate for Page One.

The weekend came and went, but the story held. I called the editor and asked if there was a problem. He was sorry to say that the story had been killed — on a last-minute order from the managing editor.

"But why?" I asked.

"Your byline," he said.

"My byline?"

Then it hit me. Even as the paper was nominating one of my other stories for a Pulitzer Prize, on this story I was an Armenian.

The official explanation was a beauty. The managing editor said I was not an objective reporter because

I had once signed a petition stating that the Armenian Genocide was a historical fact.

I had never signed such a petition. But if I had, how did this prove bias? Our own style book at the Times recognized the genocide as a historical fact.

"Would you tell a Jewish reporter that he couldn't write about Holocaust denial because he believed the Holocaust was a fact?" I asked.

His answer was to reassign my story to a colleague in Washington who covered Congress. That this reporter was Jewish — and the story dealt with Jewish denial of the genocide — didn't seem to faze the managing editor. The colleague, who may not have had a choice in the matter, proceeded to gut my story. By the time he was done, there was not a single mention of Jewish denial.

After an ugly public fight, I left the paper. The managing editor was later pushed out when an internal probe showed that my story was factual and without bias.

These days, I find myself more than a curious observer of the new cold war that has broken out between Turkey and Israel and its supporters.

What to make of the rush of Jewish leaders — from the American Israel Public Affairs Committee in Washington to a city councilman named Jack Weiss in Los Angeles — coming forward in the past few weeks to divulge their role in genocide denial?

"Frankly, [it] was not becoming

for Jews, given that we have likewise been victims of genocide," Weiss wrote in an inelegant piece in the Jewish Journal.

How to account for these sudden confessions? A pang of remorse? A cleansing of the soul? I'm afraid not. These aren't confessions, at all. Rather, they are reminders of the debt Turkey owes Israel — and they come with teeth bared.

Last week, four Jewish professors from Georgetown and Bar Ilan universities urged Israeli Prime Minister Benjamin Netanyahu to officially recognize the Armenian Genocide. Take that, Turkey!

How will Ankara react? Will fear of genocide recognition, which it considers a national security issue, eventually cause Turkey to soften its accusations of apartheid against Israel and become a compliant ally again?

And what about the Armenians and their lobby? Aren't they guilty of their own cynicism for watching the flotilla feud and now thinking that the winds of geopolitics have finally blown their way? Will they cozy up to Jewish leaders suddenly eager to embrace their genocide? Or will they tell them "thanks but no thanks" and join Turkey in standing up for the Palestinian cause?

Only next April, the season of the return of the genocide resolution, will tell.

Mark Arax is the author of several books

«ՓԱՆԹՈՒՐՔԻԶՄ» - ՄԱՐԴԿԱՅԻՆ ՉԱՐԻՔ...

ՆՇԱՆՃԻԳՆԵՑՆԱՆ

Թուրքիայում եւ Ատրպէյճանում, վերջին ժամանակներս, շատ են սաստկացել ճնշումը քրիստոնէայ եւ իսլամ ոչ թուրք փոքրամասնութիւնների նկատմամբ, որոնք ոտնահարուում են թուրքերի կողմից եւ այլեւս չհանդուրժելով, ակտիւ պայքար են սկսել, իրենց ազգային ինքնութեան եւ անկախութեան համար:

Պատմական ճշմարտութիւն է, որ հայկական կոտորածների իրականացման ժամանակ, բացի տնտեսական, քաղաքական եւ այլ նկատառումներից բնորոշիչ ազգակներից մէկը՝ կրօնական ատելութիւնն էր:

Յենուելով զօրքի եւ պետական կառավարման լծակների վրայ, թուրքերը ձեռնամուկ եղան իրենց ստոր իտէյալների իրականացմանը, թուրքանի ճանապարհին վտանգ եւ խոչընդոտ ներկայացնող հայերին, յոյներին, ասորիներին եւ միւս ազգային փոքրամասնութիւնների հարցը վերջնականապէս լուծելու, նրանց վերացնելու գործին:

«Փանթուրքիզմի» գաղափարախօսութիւնը քաղաքական նենգ իտէյոլոգիա է, որը կազմաւորուել է ժ.թ. դարի երկրորդ կէսին, տարածուած է այն երկրներում, որտեղ թուրքեր են ապրում: Հիմքում ընկած է համախմբել թուրքալեզու ժողովուրդներին եւ միահամուռ ուժերով արշաւել այլ երկրների վրայ:

«Փանթուրքիզմի» մասին առաջին անգամ խօսել է Ղրիմի թաթարներից՝ Իսմայիլ Գասբրինակին, 1883 թ.ին:

Այդ գաղափարախօսութիւնը յետագայում լայն տարածում ստացաւ Վոլգայի թաթարների, Ատրպէյճանի եւ թուրքալեզու այլ երկրների միջավայրում:

Գաբրինակին, միեւնոյն ժամանակ, կատարելագործեց գոյութիւն ունեցող բոլոր թրքական լեզուները, մաքրելով պարսկական եւ արաբական փոխանակումներից:

Յետագայում 1902 թ. Գահրէրէում լոյս տեսաւ «Թուրք» պարբերականը, որի էջերում հիմնաւորուեցին թուրքանի գաղափարները:

Կոտորածը եւ ճնշումը քրիստոնէայ փոքրամասնութիւնների հանդէպ դեռ սկսել էր Սուլթան Համիտի ժամանակներից:

Շովինիզմը, բռնաճնշումները, օտար ժողովուրդների ստրկացնելը, կրօնափոխ անելը, յատկապէս ուժեղացաւ «Երիտ-թուրքերի» ժամանակ:

Սալոնիկի «տոնմերներ» կողմից իրագործուած ստոր սպանդը 1915 թ. գարնանը, որի ժամանակ զոհուեցին 1.5 միլիոն անմեղ հայեր, նպատակ ունէր երկիրը «մաքրել» քրիստոնէայ ժողովուրդներից, տիրանալ ունեցուածքին եւ դուրս անել իրենց պատմական հայրենիքից:

Այս սպանդը թուրքերը պատճառաբանում էին նրանով, որ իբր թէ պատերազմի տարիներին, հայերը համակրում էին ռուսներին եւ բազմաթիւ հայ կամաւորներ ծառայել են ռուսական բանակում:

Եթէ այդպէս է, ինչո՞վ է պայմանաւորուած 1894-96 թթ. կոտորածները, կամ 1909 թ. Ատանայի ջարդերը, չէ որ այդ ժամա-

նակ պատերազմի խնդիր չի եղել:

Եւ այսպէս, «տեղահանութիւն-թեան» կեղծ պատրուակի տակ, անպաշտպան ժողովրդին հանեցին իրենց պապական տներից եւ անխնայ ջարդեցին արաբական անպատնէրում:

Օգտուելով պատերազմական խառնաշփոթ վիճակից, երկրում կուտակուած հազարաւոր որբացած քրիստոնէայ երեխաներին բռնի թուրքացրեցին: Այս երեխաների ժառանգները մինչեւ այսօր ապրում են Արեւմտեան Հայաստանի արեւելեան նահանգներում:

Այս ստոր քայլով, նրանք լուծեցին նաեւ մի շատ կարեւոր հարց:

Ինչպէս յայտնի է, այս քոչուր-սեյճուք ազգը, Ժ.Բ.-Ժ.Գ. դարերում, արածելով եկել զաւթել են Փոքր Ասիական թերակղզին: Նշուած ոճմակը խիստ տարբերում էր բնիկ հայ եւ յոյն ժողովրդից, որոնք հազարաւոր տարիներ առաջ, հաստատուել են այդ տարածքում եւ աշխարհին յայտնի են

եղել, որպէս զարգացած, հարուստ մշակույթով եւ աւանդույթներով քաղաքակիրթ ժողովուրդ:

Իսլամացնելով այդ ժողովուրդներին, թուրքերի նպատակն էր ազնուացնել իրենց վայրենի ազգը, վերափոխել նրանց իւրայատուկ ֆիզիսնումեան՝ գլխի յետամասում դուրս ցցուած գանկաձեւը, գեղեցկացնել եւ եւրոպացիներին նմանացնել իրենց այլանդակ ազգին:

Այժմ էլ երբ դիտում ենք թրքական հեռուստատեսութիւնը, հաղորդավարերը եւ մնացած թուրքերի մի մասը փոխուել են, բոլորովին նման չեն իրենց վայրենի նախնիներին:

Աթաթուրքի տարիներին, «Փանթուրքիզմի» իդեան, ժամանակաւորապէս մոռացութեան էր մատնուել, պատճառը, Մ. Քեմալի արեւմտամէտ կեցուածքն էր, ուզում էր Եւրոպայում առաջադէմ ժողովրդավարական պետութիւն: Նրա մահից յետոյ, 1938 թ. «Փանթուրքիզմը» վերածնուեց, նոր երանգ ստացաւ, յատկապէս թուրքիա Հիւսիս-Ատլանտեան ռազմական պլոքին միանալուց յետոյ, որը ուղղուած էր Խորհրդային Միջին

Ասիական եւ Ատրպէյճանի հանրապետութիւնները Միութիւնից անջատելու համար:

Փոքր Ասիայի դարաւոր բնիկ ժողովուրդների դէմ Թուրքիայի գործադրած բռնարարները շարունակուում են նաեւ պատերազմից յետոյ:

1925-1926 թթ. քրտական ըմբոստութիւններին յաջորդող կոտորածները եւ վերջապէս 1938 թ. Տէրսիմի հայ բնիկների ցեղասպանութիւնը:


1938 թ. Տէրսիմի սպանդի գլխաւոր նպատակը եղել է 1915ին Հայոց ցեղասպանութիւնից փրկուած եւ Տէրսիմի հայկական գիւղերի մէջ ապաստանած հայերի վերջնական բնաջնջումը:

Հայկական բարձրակարգ սիրտը հանդիսացող Տէրսիմը, հայ ժողովրդի հնադարեան հեթանոսական կրօնի եւ առաքելատիպ քրիստոնէութեան բնօրրան է եղել:

Տէրսիմի ըմբոստ գիւղերն ու աւանները երբեք չեն խոնարհուել թրքական բանակների առջեւ:

Մեծ Եղեռնի տարիներին, Տէրսիմ են ապաստանել՝ Խարբերդի,

Շաբ.ը էջ 18



ՆՈՐ ՍԵՐՈՒՆՏԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԻ
 Անկախութեամբ՝ Հայրենի Արուեստագէտ Պարացոյց
ՏԻԿԻՆ ԱՐԵՒԻԿ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ

**NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
 ARMENIAN DANCE ENSEMBLE**

Dance instructor and artist: **MRS. AREVIK HAKOPYAN**

FOR ALL AGES 5 & UP
 5 ՏԱՐԵԱՆԵՆ ՍԿՍԵԱԼ

626.398.0506
626.710.0317

REGISTRATION STARTS JUNE 4TH

Tuesdays	5:00 - 6:00pm
Thursdays	5:00 - 6:00pm
Fridays	7:00 - 8:00pm

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԻՍ 4-ԷՆ ՍԿՍԵԱԼ
 Երկուշաբթի Օրերը ժամը 5:00-6:00
 Հինգշաբթի Օրերը ժամը 5:00-6:00
 Ուրբաթ Օրերը ժամը 7:00-8:00



CLASSES BEGIN JUNE 14
MONDAYS and THURSDAYS • 5:00-6:00

**Պարի Փորձերը ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ՀԻՆԳՇԱԲԹԻ
 ՅՈՒՆԻՍ 14-ԷՆ ՍԿՍԵԱԼ երեկոյեան ժամը 5:00-6:00**

Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104

ԿՐՕՆԱՓՈՒՆ ՀԱՅԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ ԵՐՈՊԱՅՈՒՍ

ՌՈՒԲԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Բռնի իսլամացումը հայերի եւ նրանց սերունդների խնդրի ուսումնասիրութեանը գուգահեռ ի յայտ են գալիս նրանց աշխարհագրական սիւնակառուցութեանը վերաբերող նոր եւ հետաքրքիր մանրամասներ: Մասնաւորապէս՝ Թուրքիայի կրօնափոխ հայերի թեմայի ուշագրաւ եւ, միեւնոյն ժամանակ, իւրայատուկ մասն է կազմում ներկայումս Եւրոպայում բնակուող իսլամացումը հայերի սերունդների հարցը: Յայտնի է, որ ընդհանրապէս կրօնափոխ հայութեան ներկայիս վիճակի մասին տուեալները, փաստերը շատ քիչ են, եւ եթէ վերջին տարիներին Թուրքիայի իսլամացումը հայերի մասին որոշ տուեալներ ի յայտ են գալիս, ապա Եւրոպայում բնակուողների վերաբերեալ նիւթերն անհամեմատ աւելի քիչ են: Միայն վերջերս օտարազգի եւ հայ որոշ հեղինակներ սկսել են անդրադառնալ այս խնդրին եւ փոխանցել որոշ տեղեկութիւններ, որոնք, առաւելապէս, ունեն նկարագրական բնոյթ:

Նախ, անդրադառնանք կրօնափոխ հայերի Եւրոպա տեղափոխուելու խնդրին եւ փաստենք, որ 1950-ական թուականների վերջերին Եւրոպայում ու մասնաւորապէս՝ Գերմանիայում առաջանում է էթան աշխատուժի կարիք եւ այդ պատճառով մի շարք երկրների հետ կնքում են արտագնայ աշխատուորների մասին պայմանագրեր: Թուրքիայի եւ Գերմանիայի միջեւ նմանատիպ պայմանագիր է կնքում 1961թ., որից յետոյ սկիզբ է առնում Թուրքիայի հազարավոր բնակիչների արտագաղթը դէպի Գերմանիա, իսկ յետագայում՝ նաեւ Եւրոպայի այլ երկրներ: Հենց այս արտագաղթի հետեւանքով է այսօր Եւրոպայում ձեւաւորուել մի քանի միլիոնի համող թրքական համայնքը: Համաձայն որոշ տուեալների, Թուրքիայից արտագաղթողների մէջ եղել են նաեւ հայեր, ընդ որում՝ ինչպէս բացայայտ քրիստոնեայ, այնպէս էլ կրօնափոխ կամ ծպտեալ: Կրօնափոխ հայերը եւ նրանց սերունդները մի քանի տասնամեակների ընթացքում գաղթել եւ հաստատուել են Գերմանիայի, Պելզիայի, Հոլանտիայի, Շուեդիայի, Ֆրանսայի տարբեր բնակավայրերում, եւ այսօր նշեալ երկրներում կան կրօնափոխ հայութեան սերունդներից կազմուած համայնքներ կամ համայնքատիպ կառույցներ:

Տեղափոխուելով աշխարհագրական նոր միջավայր՝ կրօնափոխ հայերի եւ նրանց սերունդների շրջանում սկիզբ են առել որոշակի գործընթացներ ու երեւոյթներ, որոնք կապուած են իրական ինքնութեանը վերադառնալու հետ: Եւրոպայական կրօնափոխ հայութեան շրջանում ամենատարածուած եւ ուշագրաւ երեւոյթը, անշուշտ, կրօնադարձութիւնն է՝ քրիստոնէութեան վերընդունումը: Եւ այսօր Եւրոպայի կրօնափոխ հայերի մէջ ակունքներին վերադարձածների թիւը բաւական մեծ է: Ինչպէս փոխանցում են մի շարք աղբիւրներ, կրօնադարձութեան, արձանների որոնման գործընթացը տարբեր զարգացումներ է ունեցել եւ այսօր էլ շարունակուում է: Մասնաւորապէս՝ քրիստոնէութիւն աւելի արագ վերընդունել են ծպտեալ

հայերը, որոնք ամէն բարենպաստ առիթ օգտագործել են ակունքներին վերադառնալու համար եւ Եւրոպա տեղափոխուելուց կարճ ժամանակ անց կամ անմիջապէս յետոյ ընդունել են քրիստոնէութիւն: «Յոյս» երկշաբաթաթերթի վերջին համարներից մէկում Թամար Գեւորեանը մէջբերում է մի պատմութիւն, համաձայն որի՝ Թուրքիայից Գերմանիա տեղափոխուած արտաքուստ մուսուլման երեւացող մի խումբ մարդիկ հենց մաքսատանն ինքնաբացալցուում են եւ պաշտօնէային ներկայացնում ոչ թէ անձնագրերում առկայ մուսուլմանական, այլ՝ հայկական անուններ: Այս ուշագրաւ օրինակը ցոյց է տալիս տասնամեակներ թաքցած իրական ինքնութեանը վերադառնալու ցանկութիւնը: Ինչպէս նշում է նոյն աղբիւրը, վերոյիշեալ հայերն այսօր Գերմանիայում համայնք եւ եկեղեցի ունեն:

Տարբեր աղբիւրներ փաստում են, որ այսօր Եւրոպայում բնակուող եւ քրիստոնէութիւն վերընդունած հայերը կրօնի հարցում շատ աւելի ջերմեւանդ են: Այստեղ կայ նաեւ հոգեբանական կողմ, այն է՝ շրջապատին ապացուցել հայկականութեան հանդէպ իրենց հաւատարմութիւնը: Իրական ինքնութեանը վերադարձած հայերի շրջանում նկատուում են նաեւ որոշ հոգեբանական եւ հոգեկան խնդիրներ: Ոմանք անգամ բուժման կուրսեր են անցել հոգեբան-բժիշկների մօտ. վերջիններիս ախտորոշումը եղել է այն, որ կրօնադարձ հայերի հոգեվիճակի մէջ կարեւոր եւ որոշիչ դեր են ունեցել Հայոց ցեղասպանութեան տրամադրիկ յիշողութիւնները, տասնամեակներով ապրած վախի ու սպառնալիքի մթնոլորտը եւ այն, որ շարունակ թաքցրել են իրական ինքնութիւնը:

Այսօր Գերմանիայի տարբեր քաղաքներում կան կրօնադարձ հայերի խմբեր, որոնց մի մասը ինտեգրուած է տեղի այլ հայերի հետ, իսկ մի մասը խորթութեան հանդիպելով հին համայնքի կողմից՝ շարունակում է վարել մեկուսի կենսակերպ եւ համայնքային կեանքից դուրս է մնում:

Գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Եալչընը բազմաթիւ փաստեր է ներկայացնում Եւրոպայում ապրող կրօնափոխ հայերի մասին եւ մեզ ուղարկած իր նամակում նշում է. «Ես Գերմանիայում մարդկանց զիտեմ, որոնք առաջացած տարիքում անգամ վերընդունում են քրիստոնէութիւն եւ մկրտում»: Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքթեանը եւս անդրադառնում է խնդրին եւ որոշ հետաքրքիր փաստեր ներկայացնում:

Գերմանիայի Վիսբադեն քաղաքում, ըստ Համօ Մոսկոֆեանի, կայ կրօնափոխ հայերի ռեստորան-հաւաքատեղի, որը կոչւում է «Անի»: Յիշեալ քաղաքում ապրում են նաեւ կրօնադարձուած մի խումբ հայեր, որոնցից, օրինակ՝ Նուրեդին Գիւնդենը, որը վերանուանուել է Սիմոն, պնդում է, թէ սերում է մեծ ֆիզայի Հրայր Դժոխքի տոհմից:

Պելզիայում բնակուող կրօնադարձ հայերի մասին հետաքրքրական յօդուածով է հանդէս եկել Դաւիթ Ջէնեանը, համաձայն որի՝ հիմնականում Շրընաքից եւ Սիլո-


պից գաղթած քրտացած-քրտախօս հայերն այսօր վերադառնալով իրենց ինքնութեանը՝ կազմում են տեղի առաքելական համայնքի հիմքը եւ հանդէս գալիս որպէս ջերմեւանդ քրիստոնեաներ: Նրանց երեխաները սովորում են հայերէն, եւ այդ միջոցով մայրենիին են սկսում տիրապետել նաեւ ծնողները: Բրիւսելի քրտացած կամ քրտախօս հայերի համայնքի կարեւոր դէմքերից եւ հիմնադիրներից Մեսրոպ Աֆշարը, պատմելով հայրենիքում իրենց վիճակի մասին, նշում է. «Վախը եւ ճնշուածութեան զգացումը մեր մշտական ուղեկիցներն էին: Ճնշումները շատ էին, բայց մեր մեծերը մշտապէս յիշեցնում էին մեզ, որ չնայած լեզուի կորստին՝ մենք հայ ենք»: Աֆշարը Թուրքիայում իրենց կենսակերպի մասին որոշ մանրամասներ է պատմում, որոնցից պարզ է դառնում, որ նրանք ծպտեալ հայեր են եղել եւ գաղտնի շարունակել են քրիստոնէական սովորոյթները, ասորի քահանայի միջոցով գաղտնի մկրտել իրենց երեխաներին, կատարել հարսանեաց, թաղման քրիստոնէական արարողութիւններ: Ինչպէս շատ վաղբերում, այնպէս էլ Շրընաքում վերապրած ծպտեալ հայերն ունեցել են կրկնակի անձնանուններ՝ տան եւ դրսի համար: Մեսրոպ

Աֆշարն այս մասին պատմում է. «Մերոնց շրջապատում մենք հայեր էինք: Մկրտելիս մեր երեխաներին տալիս էինք հայկական անուններ, օրինակ՝ Սարգիս, Դաւիթ, Նուպար, Գէորգ եւ Սարօ, բայց արտաքին միջավայրում մենք նման էինք քաղաքի մնացած բնակիչներին: Մենք կրում էինք քրտական անձնանուններ, օրինակ՝ Էուզ, Յալիք, Օդեմիշ, Բիրջին»:

Աւելորդ չէ նշել, որ հայերի այս խմբի փրկութեան եւ հայկականութեան վերադարձի մէջ եւս լուրջ դեր է ունեցել Պոլսոյ պատրիարք, լուսահոգի Շնորհ Գալուստեանը, ում ջանքերով 1960-ականների կէսերին հայութեան այս բեկորները նախ սկսել են Շրընաքից եւ Սիլոպից տեղափոխուել Ստամպուլ, իսկ այնուհետեւ՝ 1980-ականներին, Պելզիա, Ֆրանսա, Հոլանդա:

Ինչպէս վերը նշուեց, այսօր կրօնադարձուած հայերի խմբեր կան նաեւ Շուեդիայում, որոնցից է ծնունդով Ատանայից Սուլէյման Ֆարուքը, որը, գտնելով իր իրական ինքնութիւնը, ընդունել է քրիստոնէութիւն եւ փոխել անունը՝ դառնալով Հայկ Արամեան: Նա մէկն է բազմահազար ուծացած

Մար.ք էջ 19



ARMENIAN IDENTITY HARVEST



PRESENTS

3rd Annual Armenian Harvest

SATURDAY
JUNE 26, 2010

12:00 PM - 8:00 PM
VICTORY PARK
2575 PALOMA STREET, PASADENA

FOOD • LIVE MUSIC • BOOTHS
CHILDREN'S ACTIVITIES
FREE ADMISSION • FREE PARKING

CO-SPONSORED BY:
THE CITY OF PASADENA

FOR MORE INFORMATION
PLEASE EMAIL:
armenianidentityharvest@gmail.com

Join our friend list on  with KHATCHIK CHAHINIAN

Come and discover your identity!



ՈՍԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՄԱՅՐ ԱԹՈՒ

«Հայաստան»: Գերաշնորհ Ոսկան արքեպս. Գալփաքեանն Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրել է իր հրաժարականը Յուլիանոսի Հայոց թեմի առաջնորդի եւ Հայրապետական Պատուիրակի պաշտօնից եւ վերադառնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին:



Ոսկան Սրբազանը աւելի քան 45 տարի ծառայել է արտասահմանում: Որպէս հովիւ եւ ուսուցիչ ծառայել Հնդկաստանում, որպէս առաջնորդական փոխանորդ Աւստրալիայում, որպէս թեմակալ առաջնորդ Դամասկոսում եւ որպէս Առաջնորդ եւ Հայրապետական Պատուիրակ Յուլիանոսում:

Ոսկան Սրբազանն արտասահմանեան իր ծառայութեան ընթացքում շուրջ 25 տարի շարունակ եղել է համակարգող Հայ Եկեղեցու եւ Եւրոպայի

Եկեղեցիների համաժողովի, ուր եղել է Կենտրոնական կոմիտէի անդամ: Սրբազանը եղել է նաեւ «Իսլամը Եւրոպայում» յանձնաժողովի մէջ:

ՀԱՅԵՐԷՆ ՓՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԻԵՒ ՍՈՒՐԲ ՍՈՖԻԱՅԻ ՏԱՃԱՐՈՒՄ

Կիւեւի Սուրբ Սոփիայի տաճարը, որը, լեգենդների համաձայն, համարւում է Ուքրաինայի եւ Կիւեւի պահպանւմը, պատրաստւում է յաջորդ տարի նշել հիմնադրման 1000-ամեակը:



Թէեւ անցեալում գիտնականները պնդում էին, որ եկեղեցին կառուցուել է 1037 թուականին, այդուամենայնիւ, վերջին ուսումնասիրութիւնները եւ եկեղեցու պատերին արուած փորագրութիւնները ապացուցում են, որ կառուցը շատ աւելի հին է: Ընդ որում, գրաքարերի մի մասը հայերէն է եւ գտնւում է աւագ խորանից աջ՝ սուրբ Անտոնիայի եւ Թէոդոսիայի խորանում:

Ինչպէս փոխանցում է Ուկրաինայում, «Ազատութիւն» ռատիոկայանի թղթակիցը, մինչ օրս խորանում յայտնաբերուել է աւելի քան երկու տասնեակ հայերէն արձանագրութիւն, որոնք տեղեկութիւններ են հաղորդում Ուկրաինայում դարեր առաջ հաստատուած հայկական համայնքի երեւելի ներկայացուցիչների՝ գինուորականների ու առեւտրականների վերաբերեալ:

«Հայկական 24 փորագրութիւնները յայտնաբերուել են դեռեւս 1970-ական թուականներին: Դրանք ուսումնասիրելու նպատակով Երեւանից գիտնականներ են հրաւիրուել, որոնցից մէկը՝ Գրիգոր Գրիգորեանը, յետագայում հայերէն փորագրութիւնների վերաբերեալ գիրք է հրատարակել», - ասում է տաճարում հետազոտութիւններ իրականացնող գիտաշխատողներից մէկը՝ Վիաչեսլաւ Կորնիենկոն եւ յաւելում. - «Ի տարբերութիւն խորհրդային ժամանակների, այժմ փորագրութիւնները ուսումնասիրուել են մի փոքր ալլ մեթոտներով, ինչը հնարաւորութիւն է տալիս նոր մանրամասներ յայտնաբերել դրանց վերաբերյալ»:

Գիտնականի խօսքով, հայկական փորագրութիւնները կատարուել են հիմնականում տաճարի հարաւային թեւում՝ աւագ խորանից աջ գտնուող տարածքում, 16-17-րդ դարերում: «Հայկական արձանագրութիւնների առատութիւնը այս խորանում գիտնականներին թոյլ է տալիս եզրակացնել, որ հայկական համայնքը Կիւեւում սեփական եկեղեցին կառուցելուց առաջ այստեղ է կատարել հիմնական եկեղեցական արարողութիւնները», - ասում է Վիաչեսլաւ Կորնիենկոն:

Ընդ որում, գիտնականները պնդում են, որ հայերը ժամանակին ակտիւ մասնակցութիւն են ունեցել Կիւեւի հոգեւոր կեանքում. բանն այն է, որ Անտոնիայի եւ Թէոդոսիայի խորանը գտնւում է տաճարի կենտրոնական հատուածներից մէկում եւ ամենամարդաշատ վայրերից մէկն է համարվում: «Հայերը հաստատ վայելել են տեղացիների յարգանքը, եթէ կարողացել են այդ խորանը ստանալ՝ սեփական եկեղեցական արարողութիւնները անցկացնելու համար», - ասում են գիտնականները:

Ներկայումս Սուրբ Սոփիայի տաճարը համարւում է համաշխարհային նշանակութիւն ունեցող կոթող եւ ընդգրկուել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից պահպանուող յուշարձանների ցանկում:

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ՀՈՉԱԿՈՒԵԼ Է ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ



Արժանթինայի մայրաքաղաքի օրէնսդիր մարմինը միաձայն քուէարկել է հայկական Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարը պատմական յուշարձան հռչակելու օգտին:

Շաբաթներ առաջ արժանթինահայ համայնքի ինդրանքով Պուէնոս Այրէսի իշխանութիւնները չեղեալ յայտարարեցին ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Մուսթաֆա Քեմալի կիսանդրու տեղադրման մասին որոշումը:

Արժանթինայում Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդ Գիսակ արքեպիսկոպոս Մուրատեանը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում ասաց. - «Մեզ համար (այս որոշումը) կարեւոր է, որ համայնքը կարող է իր ձայնը տեղ հասցնել»:

«Պատմական յուշարձան դարձնելով՝ մայր տաճարը իր արժանաւոր տեղն է ունենում», - յաւելեց նա:

1938 թուականին օծուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարը ընդգրկուելու է Արժանթինայի մշակութային կարեւորագոյն արժէքների ցանկում:

ՅՐԱՆՍԱՅԻ ԳՐՈՂ ԺԻԼԲԵՐ ՍԻՆՈՒԷՅԻ «ԵՐԵՒԱՆ» ԳԻՐՔԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԵԼ Է ՊՈՒԼԿԱՐԵՐԷՆ

Պլովդիվի «Տրակարտ» մշակութային համալիրի ցուցասրահում կայացել է Յուլիանոսի 11-ին վերջերս Սոփիայում «ՎԱԿՈՆ» հրատարակչութեան կողմից տպագրուած ֆրանսացի գրող Ժիլբեր Սինուէյի «Երեւան» գրքի պուլկարեքէն թարգմանութեան շնորհանդէսը:

Գիրքը փաստապաշտարարական վէպ է, որում հեղինակն ականատեսների եւ պատմական փաստերի ներկայացմամբ «անդրադարձել է 1915-22թթ. Օսմանեան կայսրութեան կողմից հայերի նկատմամբ իրականացուած ոճրագործութիւններին եւ ցեղասպանութեան խնդրին: Գրքում օգտագործուած փաստերը, հերոսները, յիշատակուած անձինք նոյնպէս իրական են, քանի որ դրանք վերցուած են նշեալ ժամանակահատուածը բնութագրող արժէքաւոր փաստաթղթերից:

Շնորհանդէսին ներկայ Պուլկարիայում Հայաստանի դեսպան Մանասարեանը, ողջունելով նախաձեռնողներին եւ շնորհակալութիւն յայտնելով գրքի թարգմանիչ-իւմբազիր Զլատիօ Ստայկովին, եւս կարեւորել է այն հանգամանքը, որ վէպը բոլորի կողմից գնահատուած է ոչ միայն որպէս գեղարուեստական ստեղծագործութիւն, այլ՝ փաստապաշտարարական մի փոքրիկ արխիւ, որի շնորհիւ ընթերցողին հնարաւորութիւնն է տրուում օբիեկտիւ գնահատել տուեալ ժամանակահատուածում տեղի ունեցած իրադարձութիւնները, մասնաւորապէս՝ հայերի նկատմամբ թուրքերի գործած բարբարոսութիւններն ու վայրագութիւնները:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax :-----

ԲՈՒՑՔԱՄԱՐՏ.

ԵՐՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ ՀԱՅԵՐԸ ԱԽՈՅԵԱՆԻ ԿՈՉՈՒՄՆԵՐ ԵՆ ՆՈՒԱՃՈՒՄ



Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկուայում կայացած բռնցքամարտի Եվրոպայի առաջնութիւնում, որն ավարտուեց անցեալ շաբաթավերջին, Հայաստանի դրօշի տակ հանդէս եկող Հրաչիկ Զաւարեանը (64 կգ) նուաճեց ոսկէ մետալ:

Շաբաթ կայացած եզրափակչում Զաւարեանը 3:2 հաշուով յաղթեց հունգարացի մրցակցին եւ նուաճեց մայրցամաքի ախոյեանի կոչումը:

Մոսկուայի առաջնութիւնում հանդէս եկող Հայաստանցի մէկ այլ բռնցքամարտիկ՝ Արթուր Խաչատրեանը (81 կգ), ստիպուած եղաւ բաւարարուել պրոնզէ մետալով, երբ կիսաեզրափակչում պարտութիւն կրեց: 48 կգ քաշային կարգում հանդէս եկող Յովհաննէս Դանիէլեանը նոյնպէս արժանացաւ պրոնզէ մետալի:

Առաջնութիւնը յաջողութիւն բերեց նաեւ Ռուսաստանը ներկայացնող հայազգի բռնցքամարտիկին: Եզրափակչում 4:1 հաշուով յաղթանակ տօնելով բրիտանացի մրցակցի նկատմամբ՝ Միշա Ալոյեանը (51 կգ) նոյնպէս արժանացաւ Եվրոպայի ախոյեանի կոչմանը:

Չեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՊԱՍՔԵՏՊՈԼ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ԶԻՐԸՆԿԱԼԵԼՈՒ ԵՐՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի պասքետպոլի ֆեդերացիայի ներկայացուցիչները կարծիքով՝ այս ամսուայ վերջին երկրում առաջին անգամ կայանալիք Եվրոպայի Շոփրիցիայի առաջնութիւնում Հայաստանի հաւաքականից լաւ արդիւնքներ են սպասում:



Կանանց Եվրոպայի Շոփրիցիայի առաջնութեանը (տեղի կ'ունենայ Յունիսի 28-ից Յուլիսի 3-ը Երեւանի «Միկա» մարզասրահում), հիւրընկալող երկրից գատ, կը մասնակցեն Անդորրան, Մոլդովան եւ Զիբբալթարը (Հայաստանի հետ ընդգրկուած են A խմբում): B խմբի թիմերն են Ուելսը, Շոտլանդիան եւ Մալթան (Ատրպէյճանի հաւաքականը հրաժարուել է զալ Երեւան):

«Մեր նպատակն է համեմատել եզրափակիչ», - ասել է Հայաստանի հաւաքականի գլխավոր մարզիչ Գիա Ղազանչեանը մամուլի ասուլիսի ժամանակ:

2009-2010 թթ. Եվրոպայի գաւաթի խաղարկութեան ժամանակ Ղազանչեանի գլխավորութեամբ Հայաստանի առաջատար պասքետպոլի ակումբ «Հատիւր» հասաւ փլէյ օֆ փուլ: Վերածնուած հայկական ակումբի յաջող ելույթը տպաւորութիւն գործեց պասքետպոլի միջազգային մարմնի՝ FIBA-ի վրայ, որն է որոշեց առաջնութիւնն անցկացնել Երեւանում:

Եթէ «Հատիւրում» խաղում էին հիմնականում արտասահմանցի պասքետպոլիստուհիներ, ապա ազգային հաւաքականի դէպքում երկրները ստիպուած կը լինեն ապաւինել «ներքին» ռեսուրսներին:

Մի շարք սփիւռ-քահայ մարզուհիներ անցեալ ամիս հրաւիրուել էին Երեւան՝ ուժերը փորձելու համար: Նրանց թւում էր CSU Bakersfield-ի նախկին անդամ, աչքի ընկնող պասքետպոլիստուհի Քրիստինէ Կապենկեանը եւ մէկ այլ հայազգի պասքետպոլիստուհի Քրիս Խաչատուրովը:

Եվրոպայի պասքետպոլի ֆեդերացիան (FIBA-Եվրոպա), ՀՀ կառավարութիւնը եւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտէն Երեւանում կայանալիք առաջնութեանը յատկացրել են 50-55 մլն դրամ:

Միայն երկու լաւագոյն թիմեր կ'անցնեն B խումբ: Ներկայումս Հայաստանը FIBA-ի վարկանիշային աղիւսակում ընդգրկուած չէ, որում ընդգրկուած 69 թիմերից առաջատար հորիզոնականներում են ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Աւստրալիան:

www.massisweekly.com

World Cup 2010 Viewing Party

All matches start at 11:30am
Doors will open at 11 am

SOUTH AFRICA 2010

Admission is Free
Food will be sold

June 12 England vs USA
June 20 Brazil vs Ivory Coast
June 26 Round of 16

June 27 Round of 16
July 3 Quarterfinal
July 10 Third Place Match

JULY 11 WORLD CUP FINAL!

Pasadena Homenmen Center
1060 N. Allen Avenue
Pasadena, CA 91104

For info visit
www.homenmen.org
or call 1-818-660-5HMM

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ՆՇԱՆ ԷՐՎԱՆԵԱՆԻ մասնական տխուր առիթով էրվանեան ընտանիքը կը կատարէ հետեւեալ նուիրատուութիւնները.
Երեւանի Բենիամին Ժամկոչեանի անուան վարժարանին \$800
«Մասիս» շաբաթաթերթին \$400
Հ.Մ.Մ.ին \$400

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ՆՇԱՆ ԷՐՎԱՆԵԱՆԻ մասնական տխուր առիթով տիար Վազգէն Յակոբեան իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին եւ ընտանեկան համայն պարագաներուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$50 տոլար կը նուիրէ Հ.Մ.Մ.ին:

ՇՆՈՐԱԿԱԼԻԷ

Այսու կու գանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու բոլոր անոնց որոնք անձամբ, ծաղկեպսակով, փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ, նամակով եւ կամ հեռախօսով իրենց վշտակցութիւնն ու զօրակցութիւնը յայտնեցին մեզի, մեր սիրեցեալ ամուսնոյն եւ հարազատին Նշան էրվանեանի անժամանակ մասնական առիթով:
Էրվանեան Ընտանիք

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԻԿԵԱՆԻ մասնական տխուր առիթով Լուսին Յովակիմեան եւ իր զաւակները իրենց կորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկ. Հռիփսիմէ Պատիկեանին եւ ընտանեկան համայն պարագաներուն:
Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Փոքրիկն էՎԼՆ ԱՐԱ ԷԼՈՒՈՒՏԻ մասնական տխուր առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան կը յայտնեն իրենց խորագրաց ցաւակցութիւնները փոքրիկի ծնողքին եւ հարազատներուն յատկապէս մեծ հօր եւ մեծ մօր Տէր եւ Տիկ. Պօղոս Մուրճաֆեանին:
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Վաղամեռիկ փոքրիկն էՎԼՆ ԱՐԱ ԷԼՈՒՈՒՏԻ մասնական տխուր առիթով Յովհաննէս Պալայեան իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ծնողներուն եւ համայն պարագաներուն:
Այս առիթով \$50 տոլար կը նուիրէ «Մասիս»ին, փոխան ծաղկեպսակի:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՏԱՔ ԱԲԱԶԱՆԸ

Շաբուկապատ էջ 6-էն

նուխ յայտնի կը դառնայ անոր վաղուայ ճակատագիրը եւ իսկական դիմագիծը: Իսկ գալով «փենալթի»ին չափորդելիք շարունակական տեսարանին, մենք ակընդէտ կը սպասենք «Ազատութիւն» նաւու իրաւ նաւավարի չափորդ քայլին, որպէսզի կիսատ չթողու սկստած քարոզչութիւնը:
Կրնա՞յ... անհամբեր ենք: Մենք կը ծափենք գործը, ոչ թէ խօսքը: Ամէն պարագայի, պաղեստին-

ցի ժողովուրդին ցաւը, ցաւ մըն է, որուն բաժնեկից է ամէն գիտակից ու ազնիւ մարդ, ինչ ազգի, դաւանանքի ու գաղափարի ալ պատկանած ըլլալ ան, որ կ'ատէ անմարդկայնութիւնը, դաժանութիւնը, վանտալութիւնը եւ մոլեռանդութիւնը:
Հայ ժողովուրդը, առաջինը ինք կը զգայ պաղեստինցիին ցաւը... աւելի՛ քան անոնք, որոնք կ'ուզեն բեմականացնել, քաղաքականացնել եւ շահագործել ընծայուած ոսկի առիթներ:

ՔԱԶ ՆԱԶԱՐ

ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյի 280-րդ կայանից

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՀԵՌՈՒՍՏՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)
GLOABCAST SATELLITE
ՀԻՆԳՇԱՔԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ԿՐՕՆԱՓՈՆ ԶԱՅԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ ԵՐՈՊԱՅՈՒՄ

Շաբուկապատ էջ 14-էն

հայերից, որոնք ապրում են թուրքի կամ քրտի արտաքին ինքնութեան քողի տակ: Դեռ մանկուց կասկածներ ունենալով իր ինքնութեան շուրջ՝ նա որոնել է իր արմատները եւ 1983թ. Դամասկոսում տեղի հայկական եկեղեցում մկրտուել, իսկ երկու տարի անց՝ 1985թ. տեղափոխուել ու հաստատուել է Շուշուի հայրան: Իր ինքնութեան մասին նա նշում է. «Ներքուստ ես միշտ զգում էի, որ ուրիշ եմ: Ես կարող էի քուրտ մնալ, բայց ես այլ կերպ որոշեցի»: Հաստատուելով Մտքհոլմում՝ Հայկ Արամեանն ամուսնացել է այնտեղ բնակուող դիրբեքի ճարտար հայուհու հետ, իսկ իր երկու զաւակներին անուանել Մասիս եւ Անի: Երեխաները, ի դէպ, սովորել եւ տիրապետում են հայերէսին: Յատկապէս ուշագրաւ է, որ ակունքներին վերագրածած Հայկ Արամեանը ձգտում է իր երեխաների մէջ արմատաւորել ու էլ աւելի վառ պահել հայկականութեան զգացումը եւ այդ նպատակով նրանց մի քանի անգամ արդէն բերել է Հայաստան, մասնաւորապէս՝ նաեւ Արցախ: Նա նշում է. «Ես այնքան շատ բան էի բաց թողել, ես ուզում եմ, որ իմ երեխաները մեծանան՝ իմանալով, թէ իրենք ով են: Ես ուզում եմ, որ իմ որդին հպարտանայ իր հայկական ծագումով»:
Այսօր Արամեանը շուշուի համայնքի ակտիւ անդամներից է: Հարկ է նշել, որ Հայկի ընտանիքի մի մասը մնացել է Ատանայում, այսինքն՝ կայ այնտեղ հալածուելու վախը, ինչը, սակայն, չի կարողացել խոչընդոտել նրան իրական ինքնութեանը վերագրուած համար: Աւելին՝ մի քանի տարի առաջ Շուշուի հայ տեղափոխուել

նաեւ նրա եղբայրը եւ կրկին վերագրածել արմատներին՝ ընդունելով Արամ անունը:
Նշենք, որ եւրոպայեանկ այս հայերը ինդիւրներ ունեն ինքնութիւնը բացառապէս չեն հարցում, քանի որ նրանց ազգականները ներկայումս էլ բնակուում են թուրքիայում եւ կարող են դառնալ հալածանքի թիրախ, ուստի եւ երբեմն նրանք կողմ չեն շատ բաց արտայայտուելուն: Կան ընտանիքներ, որոնք կրօնադարձուելուց յետոյ որոշակի անհանգստութիւն ունենալով թուրքիայում մնացած ազգականներին համար՝ այդքան էլ բացառապէս չեն խօսում վերագրած ինքնութեան մասին եւ անգամ կեանքի երկակի բնոյթ ունեն: Նմանատիպ մի օրինակ է Հոլանտիայում հաստատուած դիրբեքի ճարտար Մերջանեանների ընտանիքը. նրանք 1970-ականներին Ամստերդամ տեղափոխուելուն պէս վերընդունել են քրիստոնէութիւն, սակայն այսօր էլ Դիրբեքիում ունեն ազգականներ: Ինչպէս նշում է թուրք հետազոտող Ուլուր Ունգորը. «Այսօր, երբ նրանք այցելում են Դիրբեքիում մնացած իրենց ազգականներին, Եւրոպայի եւ թուրքիայի միջեւ ինքնաթիռային թռիչքների ժամանակ կարելի է ակնաստես լինել մի կրօնից միւսին անցման իւրապատուկ դրսեւորման. կանայք արդէն ինքնաթիռում գլուխները ծածկում են գլխաշորով, հայկական անունների փոխարէն օգտագործում մուսուլմանական անուններ եւ Դիրբեքիում իրենց պահում են մուսուլմանների պէս»:
Ամփոփելով՝ նշենք, որ եւրոպայեանկ կրօնադարձ հայերի թեմայի ուսումնասիրութիւնն ունի ոչ միայն գիտական կարեւորութիւն, այլեւ խիստ այժմէական ու գործնական նշանակութիւն:

ԹՈՒՐՔԻԱՆ, ԻՍՐԱՅԷԼԸ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՐ

Շաբուկապատ էջ 7-էն

ներն ու իրենց «զգեստապահարանները» փոխադարձ պարունակութիւնը:
Լաւ կը լինի, որ թուրքիայի ժողովուրդը նախ սանձահարի, այնուհետեւ շրջադարձ ուղղութիւն վերցնել ստիպի երեսպաշտախօս իր արկածախնդիրներին, որոնց ներկայում վարած քաղաքականութիւնը անմիջական շարունակութիւնն է թալէաթի, էնվերի եւ Ջեմալի՝ երիտթուրքերի այն եռեակի, որը յղացաւ ու կեանքի կոչեց Յեղասպանութիւնը եւ Հայոց բարձրավանդակի համապարփակ բռնազաւթումը: Իրականում թուրքերն իրենք պէտք է մտածեն այս հարցի շուրջ:
Իսկ ինչ վերաբերում է ԱՄՆին, Եւրոպային եւ Նոյնիսկ Իսրայէլին, ապա այս ապականուած

գործը կարող է լինել նրանց նախավերջին պատեհութիւնը, որպէսզի ազգասպանութիւնը ճանաչեն իր իսկ անուամբ, ոճրագործ պետութեանը պատասխանատուութեան կանչեն եւ վերջապէս երաշխաւորեն գոհերի ու նրանց ապրող ժառանգների հասանելիք իրաւունքների վերականգնումը եւ վնասից փոխհատուցումը:
Սա պէտք է ի կատար ածուի ոչ իբրեւ լաւութիւն կամ ինքնապատակ լծակների գործիք, այլ որպէս պարզ, ուշացած եւ անպատասխան մնացած ճշմարտութեան ու արդարութեան պահանջ: Եւ ուրիշ ոչինչ:
Բաֆֆի Կ. Յովհաննիսեանը Հայաստանի առաջին արտգործնախարարն է եղել, ով այժմ ՀՀ Ազգային ժողովում մեկնապայման է «Ժառանգութիւն» կուսակցութիւնը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ԴՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680



ԴՌՆԲԱՑ ԴԻՄԱՎՈՐԵՆՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

- Ձեր թարգմանիչը կամ կրողից ՊԱՏՎԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ԱՍԵԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՁԻ ՀԱՐՑԱԴՐՎԻ
- ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՁԵՐ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ԳԱՂՏԵՒՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇՆԱՎՈՐՎՈՒՄ Է

Եթե արդեն հետ եք ուղարկել մարդահամարի լրացրած թերթիկը, սակայն ինչ-ինչ պատճառով այն մեզ չի հասել, ապա Ձեր դուռը կարող է թակել մարդահամարին աջակցող մեր աշխատակիցը: Բացկնք մեր դռները ապագան բարեկամի մարդահամարին: Թերթիկը լրացնելուն և հարցերին վերաբերող մանրամասներին կարող եք ծանոթանալ՝ այցելելով 2010census.gov

ՄԱՍՆԱԿՑԵԼՈՎ 2010 ԹՎԱԳԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ՝ ՉԵՌԱՎՈՐԵՆՔ ՄԵՐ ԿՑԱՆՔԻ ՑԱՆԿԱՆՈՐԱԿԸ

United States
**Census
2010**

ԱՄՆ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 2010

ԱՅՆ ՄԵՐ ՁԵՌՔՈՒՄ Է